Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

329.14
Ռ-95

15 JAN 2010

05 FEB 2007

Թիւ 7, Հրատարակութիւն «Հայրենիք»-ի

ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ն. ՀԱՆԴՈՑՑ

ՊՕՍԹՈՆ

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի

1909

24 JUL 2013

Թիւ 7, Հրատարակութիւն «Հայրենիք»-ի

29.14(07)
Հ-95

ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ն. ՀԱՆԴՈՅՑ

622

ԳՕՍԹԸՆ
ՏՊԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ
1909

ՀՍՍՌ Պետ. Հ. Գրադարան
ՀՍՍՌ Գիտ. Բան. Գրադարան

20.565

24 JUL 2013

4188
39

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Շատ տեսակէտներով օգտակար է, որ հայ ընթերցողը ծանօթանայ ռուս Ընկերվար-Յեղափոխականների ծրագրին։ Նա մի ամբողջական և ամփոփ աշխարհահայեացք է՝ յենուած մի կողմից գիտութեան, և միւս կողմից ռուս ժողովուրդի խորին ուսումնասիրութեան վրայ։ Նա ռուս առաջադէմ մտքի լաւագոյն արտայայտութիւնն է։ Նրա դրած պահանջները ամենից լաւ լուծում են բազմամիլիոն և այլատարր կայսրութեան թէ՛ քաղաքական և թէ՛ տնտեսական կենսական հարցերը։ Նա հանդիսանում է համամարդկային գաղափարների ազգայնացման ամենալաւ նմուշներից մէկը։

Մեր ամենից զօրեղ ու ծաւալուն կազմակերպութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ սերտ առնչութիւն ունի ընկերվար-յեղափոխականների հետ թէ՛ տեսական և թէ գործնական ասպարէզում։ Հետաքրքիր ընթերցողին այս գրութեամբ մենք տալիս ենք համեմատութեան մի եզր։ Երկու ծրագրի ակնյայտնի նմանութիւնները պարզ փոխադրութեան արդիւնք չեն, այլ հետևանք նոյն արմատից աճելուն։ Հ. Յ. Դաշնակցութեան ականաւոր հիմնադիրներից մի քա-

նիսը ապրել ու չնչել են նոյն հոգեկան մթնոլորտում, ուր աճել են ընկերվար-յեղափոխական կուսակցութեան հիմնական գաղափարները։

Մեր գրութեան հիմքը կազմում է այն ծրագիրը, որ մշակուած և հաստատուած է 1906 թ. Ա. Ընդհանուր ժողովում։

Նիւթը հետաքրքրական դարձնելու համար շարադասութեան տուել ենք բանախօսութեան ձև։

Ն. Հ.

ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ընկերնե՛ր,

Թագակիր գլուխները սիրով խորհրդակցում են իրար հետ ժողովուրդի քաղաքական կապանքները պրկելու համար։ Դրամատէրերը և հողատէրերը մշտական յարաբերութեան մէջ են աշխատաւոր ժողովուրդի տնտեսական շղթաները զօրացնելու համար։ Ռոնութիւնը և շահագործութիւնը համատարած երևոյթներ են և աշխարհի չորս կողմից կարմիր ձեռքերն ու քարացած սրտերը աջակցում են իրար՝ մի անարդար և կործանիչ գործի համար։

Պէտք է որ բոլոր իրաւազուրկներն և քաղաքակրթութեան բեռը կրողները նոյնպէս մօտենան իրար, յարաբերութեան մէջ մտնեն, խորհրդակցեն աշխարհի երեսից սրբելու համար անարդարութիւնը և ստեղծելու համար ազատութեան, հաւասարութեան և լոյսի երկրաւոր թագաւորութիւնը։ Աշխարհի բոլոր տառապողները պէտք է իրար ճանաչեն և աջակցեն։

Ահա թէ ինչո՛ւ՝ երբ ինձ դիմեցին գալ և ձեր առջև պարզել մեր ծրագիրը՝ են ուրախութեամբ յանձն առի։ Դուք կը տեսնէք, որ աշխատաւոր մարդկութեան շահերը և վիճակը ամէն տեղ նման են իրար։ Մէ՛կ է ցաւը, մէ՛կ է և դարմանը։ Փոխադարձաբար ճանաչե՛նք իրար և միասին դիմագրաւենք չարիքին։ Կործանիչ ուժերի դէմ հանե՛նք աշխատանքի չինարար և կենդանի ոյժը։

Ընկերնե՛ր, մեր ծրագիրը երկու աղբիւր ունի. մարդկութեան կեանքն ընդհանրապէս և մեր կեանքը մասնաւորապէս։ Մենք դիտած ենք շարունակ մարդկային հասարակութեան հոլովումը ժամանակի ընթացքում և մեր սեփական պատմական անցեալը։ Մենք աշխատած ենք պարզել մեզ համար մարդկային պատմութեան ընթացքը, ըմբռնել ժամանակակից մարդկութեան թշուառ կացութիւնը և նրա պատճառները և որոշել անհատի դերը պատմութեան մէջ։

Ռուսաստանը սկսած Պետրոս Մեծի օրերից սերտ յարաբերութեան մէջ է մտնում եւրոպական երկիրների հետ, որոնք այն ժամանակ շատ կողմերով բարձր էին մեզանից և են մինչև այսօր։ Այդ քաղաքակիրթ և առաջնակարգ երկիրների հետ մեր ունեցած յարաբերութիւնը անօգուտ և անհետևանք չմնաց. մենք նրանցից շատ բան առինք. վարչական և զինուորական կազմ, մամուլ, գրական ձևեր...։ Մեր բարքերը փոխուած են. մեր մտածելու և զգալու կերպերը նոյնպէս. բայց՝ [illegible] են. չեն նոյնացած։

Այսպէս՝ մեր կեանքի շատ կողմերով մենք նման ենք եւրոպացիներին, բայց շատ ուրիշ կողմերով տարբեր ենք նրանցից։ Մեր ամենօրեայ անհատական կենցաղով, մեր հասարակական և պատմական կեանքով՝ տարբերուում ենք քաղաքակիրթ միւս երկիրներից. մենք ունենք մեր առանձնայատկութիւնները, մեր տարբերիչ գծերը։

Այս առանձնայատկութիւնների աղբիւրները երեք են. նախ՝ մեր պատմական անցեալը, որ երկար դարեր ընթացել է եւրոպական միւս երկիրների պատմութիւնից անջատ և անկախ, իր դրոշմը դնելով մեր ընտանեկան և ընկերական

կենցաղի վրայ։ Երկրորդ՝ մեր երկրի աշխարհագրական դիրքը, մեր անեզր տափաստանները, հիւսիսի ճախճախուտները, մթին անտառները և դանդաղահոս լայն գետերը, մեր մռայլ երկինքը, երկար ձմեռը և դաժան սառնամանիքը։ Վերջապէս երրորդ՝ մեր պետութեան միջազգային դիրքը, մեր քաղաքական կարևորութեան աստիճանը և մեր յարաբերութիւնները հարևան երկիրների հետ։

Ընկերնե՛ր, մեր հայեացքը մարդկային յառաջդիմութեան մասին խորապէս տարբերուում է ուրիշ կուսակցութիւնների հայեացքից։ Մեր կարծիքով՝ յառաջդիմութիւնը մի յարատև կռիւ է, որ ունի երկու արտայայտութիւն, չատելու համար երկու նպատակ։ Համերաշխութիւն և անհատի բարգաւաճման և ներդաշնակ զարգացում — ահա այդ երկու արտայայտութիւնը։

Մարդկային պատմութիւնը իր բազմազան և բազմաձև կռիւներով ընթացել և ընթանում է այս երկու ուղղութեամբ։ Պատմական բոլոր երևոյթները կա՛մ կռիւ են անհատականութեան համար և կամ թէ կռիւ՝ համերաշխութեան համար։ Այս երկու տեսակ կռիւները հակառակ չեն միմեանց, այլ փոխադարձաբար լրացնում են իրար. ամէն կռիւ համերաշխութեան համար միևնոյն ժամանակ անհատի բարգաւաճման և ներդաշնակ զարգացման օգտին է և ընդհակառակը։

Ասողներ կան, որ մարդկային պատմութեան ամբողջ բովանդակութիւնը կազմում են դ՛դ-ն դասակարգային կռիւները։ Մարդկային ընկերութիւնը, ասում են նրանք, կազմուած է դասակարգերից. այս դասակարգերը հակամարտ են

իրանց շահերով. այս հակամարտութեան զարգացումը կազմում է մարդկային պատմութեան -ՄԲՈՂՋ բովանդակութիւնը. անհատը կեանքի մէջ ո՛չ մի նշանակութիւն ունի։

Մենք այս տեսակէտը համարում ենք սխալ։ Մենք ընդունում ենք, որ, այո՛, հասարակութիւնը կազմուած է դասակարգերից։ Մենք համոզուած ենք, որ դասակարգային հակամարտութիւնը շատ մեծ դեր է խաղում կեանքի մէջ. այդ հակամարտութեամբ կարելի է մեկնել պատմական շատ երևոյթներ։ Բայց միևնոյն ժամանակ մենք պնդում ենք, որ առանձին անհատները նոյնպէս դեր ունեն պատմութեան մէջ, որ գիտակից անհատը մեծ ազդեցութիւն ունի ընկերային (սոցիալական) կեանքի վրայ։

Մարդկային կեանքի ընթացքը տարրերային է այն չափով, որ չափով նա անգիտակից է և արդիւնք բնական և բնազդական ոյժերի։ Երբ անհատների մէջ ծագում է գիտակցութեան լոյսը, այն ժամանակ նրանք կարող են ազդել կեանքի այս տարրերային հոսանքի վրայ և նրա ընթացքը փոխել իրենց կարողութեան համեմատ։ Այս դերը կարող են խաղալ բոլոր գիտակից անհատները, բայց առաւելապէս նրանք, որոնք տոգորուած են արդարութեան և ճշմարտութեան վառ սիրով։ Այս վեհ գաղափարների անունով նրանք միջամտում են կեանքի տարրերային յորձանքին և ազդում նրա ուղղութեան վրայ։

Անհատը այնքան աւելի կարող է միջամտել կեանքի հոսանքին, որքան աւելի է գիտակցում իր՝ անհատական և բնութեան ոյժերին։ Ճանաչելով բնութեան ոյժերը՝ անհատը կարողանում է տիրել նրանց կամ որ նոյնն է՝ կառավարել այդ

ոյժերը։ Ո՛րքան աւելի խոր է ըմբռնում որևէ անհատ կամ խումբ բնութեան վարիչ ոյժերը, այնքան աւելի դիւրութիւն ունի օգտուելու նրանցից։ Ո՛րքան աճում է մարդու գիտութիւնը, նոյնքան աճում է նաև նրա իշխանութիւնը բնութեան վրայ, ապա ուրեմն նաև կեանքի և նրա հոսանքի վրայ, որովհետև կեանքը բնութեան ոյժերի արտայայտութիւնն է։

Երկու ոյժ հանդիսանում են իբր խթան մարդու գիտակցութեան աճելուն և զարգանալուն. ազգաբնակութեան աճումը և մարդկային պահանջների բազմանալը։ Երբ ազգաբնակութիւնը բազմանում և խտանում է, մարդիկ ստիպւում են միջոցներ որոնել ամէնի գոյութիւնը պահպանելու համար. երբ մարդու պահանջները բազմանում և տարատեսակ են դառնում, մարդիկ ստիպւում են նոր հնարներ որոնել այդ պահանջները գոհացնելու։ Այս երկու ոյժերն են աղբիւրը ամէն գիտութեան և հնարամտութեան։

Ազգաբնակութեան աճումը և նոր պահանջների երևան գալն էր, որ ստիպեց մարդկանց լեռները ծակել, դաշտերը մշակել, հեռաւոր երկիրներն իրար հետ կապել, անջատ ազգերը յարաբերութեան մէջ դնել և այս ու նման միջոցներով համերաշխութեան կապերը պրկել և անհատի բազմակողմանի զարգացմանը նպաստել։ Բայց այս ամէնը հնարաւոր էր կատարել միայն այն չափով, ինչ չափով մարդկութիւնը տիրում էր բնութեան ոյժերին։ Ուրեմն, առանց բնութեան ոյժերին իշխելու՝ մարդը չի կարող կեանքի հոսանքին միջամտել։

Մինչև այսօր մարդկութեան զարգացումը ընթացել է այս ճամբով. նա շարունակելու է

միևնոյն ուղին։ Ագգարնակութիւնը գնալով աճում է. մարդը աւելի խորն է ճանաչում բնութեան այժերը և աւելի տիրականօրէն իշխում է նրանց։ Մարդկութիւնը շարունակում է հոգալ ու կարգադրել իր ապրուստի ծանր խնդիրը։

Բայց ի՞նչպէս և ի՞նչ հիմքով։

Ներկայիս՝ բուրժուական հասարակութեան մէջ մենք տեսնում ենք միմիայն անհատական և մասնաւոր տնտեսութիւններ. սրանք ապրում և զարգանում են բաժան-բաժան և շարունակ մըրցում են իրար հետ։ Հասարակական տնտեսութիւնը մինչև այսօր անկերպարան վիճակ ունի. նա կազմակերպւած չէ. այնտեղ չի երևում գիտակցաբար մշակւած մի որոշ յատակագիծ։ Ամէն տնտեսութիւն ապրում է ինքն իր համար և ջանք է թափում վնասելով միւսին՝ նրա տեղն անցնելու։ Արտադրութեան միջոցները, այսինքն հողը, հանքերը, գործարաններն ու գործիքները պատկանում են մասնաւոր անհատներին կամ փոքրիկ խմբակներին։ Նրանք մասնաւոր սեփականատէր են։

Այս սակաւաթիւ բախտաւորները, իրենց ձեռքը ունենալով արտադրութեան բոլոր միջոցները, սեփականացնում են արդիւնաբերութեան ամբողջ արդիւնքը և կազմում են հսկայական դրամագլուխներ։ Երկրագործը մի կողմից և գործաւորը միւս կողմից՝ չարաչար աշխատելով՝ ստեղծում են հարստութիւններ, բայց իրենց քրտինքի պտուղը իրենք չեն վայելում. նրանք անմասն են մնում իրենց ստեղծած հարստութիւնից։ Այսպիսով՝ հարստութիւնը և նրա ստեղծողները բաժանւած են իրարից։

Այս տեսակ տնտեսութիւնները, որ սովորա-

բար դրամատիրական անունն են կրում, մէկ կողմից արգելք են հանդիսանում՝ սահմանափակում են ուրիշ ձևի տնտեսութիւնների զարգացումը, միւս կողմից եղածները խեղաթիւրում են։ Իրենց գոյութեամբն իսկ նրանք չեն թոյլ տալիս, որ զարգանան աշխատանքի հաւաքական ձևերը, ուր գործաւորները պիտի կարողանային հաւասար աշխատել և հաւասար վայելել։ Միւս կողմից նրանց խոչնդոտ են դառնում ընկերային (սոցիալական) խոշոր տնտեսութեան զարգացման։

Գործաւորները բաւականաչափ միջոցներ չունին, որ կարողանան անհատական տնտեսութեան դէմ մաքառել. նրանց պակասում է անհրաժեշտ դրամագլուխը։ Գալով ընկերային տնտեսութեան՝ թէև ամէն կերպ ձեռնտու է հասարակութեան, որ իր տնտեսութիւնը հանրացնէ և խոշոր չափերի հասցնէ, բայց այդ բանը վնասակար է մասնաւոր սեփականատէրերի անհատական շահերին։ Ահա թէ ինչո՛ւ սրանք ամէն կերպ արգելք են դառնում ընկերային տնտեսութեան զարգացման։

Այստեղ է որ հանդէս են գալիս ներկայիս մասնաւոր՝ դրամատիրական տնտեսութեան բոլոր վնասակար և կործանիչ կողմերը։ Դէմ լինելով հանրային տնտեսութեան և հաւաքական աշխատանքին, տնտեսական կեանքի մէջ նրանք մրցընում են մի տեսակ անիշխանութիւն։ Նրանք հաշի չեն առնում հրապարակի պահանջը. իրար դէմ մրցելու տենչով՝ նրանք յաճախ արտադրում են պէտք եղածից աւելի ապրանք, իրար վնասելու փափագից մղւած՝ նրանք ճգնում են կործանել հակառակորդին։ Այս անողոք մրցման սոսկալի հետևանքները ծայրայեղ չափեր են առնում

մանաւանդ տնտեսական տագնապների ժամանակ։

Տնտեսական այս կարգերում մարդիկ դուր վատնում են ահագին ոյժ ու եռանդ, որ կարելի էր մարդկութեան համար շատ աւելի օգտակար ձևով գործադրել։ Ինչպէս արտադրում են անհաշիւ, այնպէս էլ աշխատում են անհաշիւ։ Չը նայելով որ գիտութիւնը շատ աւելի բարձր տընտեսական ձևեր է մշակել, քան մենք այսօր տեսնում ենք իրական կեանքում, բայց քանի որ գոյութիւն ունի մասնաւոր տնտեսութեանց կատաղի մրցութիւնը, անկարելի է այդ բարձր և հանրօգուտ ձևերը մտցնել կեանքի մէջ։

Այնտեղ, ուր տնտեսութիւնները յարաժամ մրցում են իրար հետ, գործաւորները աշխատում են ցած օրավարձով. ու քանի որ աժան գործաւորով հնարաւոր է տնտեսութեան անկատար ձևերը պահպանել, աւելի բարձր և կատարեալ ձևերի դիմող չի լինում։ Միւս կողմից տնտեսական մրցորդ կարգերում միշտ հնարաւոր է սոսկական՝ անհատ արդիւնաբերողներին անուղղակի կերպով շահագործել և այս անուղղակի շահագործութիւնը՝ միացած բանւորների ուղղակի շահագործման հետ՝ անօգուտ և անշահաբեր են դարձնում տնտեսութեան լաւագոյն ձևերը, որքան էլ նրանք բարիք լինէին ցաւատանջ մարդկութեան համար։

Անհատական՝ մասնաւոր տնտեսութիւնն է ուղղակի պատճառը գործաւոր ժողովուրդի այն ծանր և թշուառ տնտեսական և բարոյական վիճակի, որի մէջ նա դեգերում է այսօր։ Նրա կատարեալ անապահովութիւնը ուրիշ պատճառ չունի։ Տնտեսական ահաւոր տագնապների ուղղակի հետևանքն է անգործութիւնը. սա իր կարգին իջեցնում է գործաւորի առանց այն էլ ողորմելի օրավարձը և ահա աշխատաւորը զրկւում է ոչ միայն բարոյական ու մտաւոր զարգացումից, որ չունէր արդէն, այլ և կուշտ ուտելուց։

Տնտեսութեան այս ձևը առաջ է բերում մի ահեղ և չահամոլ մրցում, ուր ամէնքը կռւում են ամէնքի դէմ կեանքի մէջ արտօնեալ դիրք գրաւելու համար։ Այս կարգերի մէջ օրէցօր ծաւալւում է դրամի ամենազօր իշխանութիւնը. ամէն ինչ դառնում է հաշւի և վաճառքի նիւթ. մեր կեանքի բոլոր բարոյական հիմունքները քայքայւում և փլում են։ Ամէնքը կռւում են ապրուստի համար, ոտի տակ տալով ամէն սրբութիւն, ամէն բարձր ու ազնիւ բան։

Սակայն դրամատիրական տնտեսութիւնը ունի նաև իր դրական կողմերը եթէ ոչ ներկայի, գոնէ ապագայի համար։ Դրամատիրական տընտեսութեան ծոցում այսօր կան սաղմեր, որոնք ծլելով պիտի աճին և զարգանան և գալիք լաւագոյն տնտեսական կազմակերպութեան սիւները դառնան։ Նեղ են այսօրուան տնտեսութեան սահմանները, շատ չնչին են նաև այն յարաբերութիւնները, որ առաջ են եկել մարդկային ընկերութեան զանազան խաւերի մէջ։ Բայց նոյնիսկ այս նեղ շրջանակի մէջ արդէն ծնունդ են առել հաւաքական աշխատանքի ձևերը և խոշոր չափեր ունեցող տնտեսական կազմերը։

Այս նոր երևոյթների զարգացումը դեռ չա՞տ անկատար է և շատ միակողմանի. բայց նա կայ, գոյութիւն ունի և գնալով աճում է։ Այստեղ ահա երևում են դրամատիրական տնտեսութեան ստեղծագործող կողմերը. այստեղ պատրաստւում

են ապագայ ընկերվարական տնտեսութեան նիւ-
թական հիմունքներից մի քանիսը։

Աշխատաւորները համախմբուում են մեծ գոր-
ծարաններում կամ խոշոր կալուածատէրերի հո-
ղերի վրայ։ Գործելով միասին՝ նրանք վարժուում
են հաւաքական աշխատանքի. շարունակ շփուում
են իրար հետ. նրանց կարիքները և պահանջնե-
րը միատեսակ են դառնում. նրանց շահերը նոյ-
նանում են։ Ստեղծուում է մի ընդհանուր գոր-
ծաւորական հոգեբանութիւն, մտածելու և զգա-
լու մի ընդհանուր եղանակ։ Նրանք սովորում
են հաւաքական ոյժերով մի մեծ տնտեսութիւն
վարել։ Այս տարրերից պիտի կազմուի ապագայ
ընկերվարական հասարակութիւնը. այս հիմքերի
վրայ պիտի դրուի գալիք տնտեսական հանրաշահ
կազմակերպութիւնը։

Դրամատիրական տնտեսութեան չնորհիւ աշ-
խատաւորների շահերը նոյնանալով՝ ստեղծուում
է գործաւոր դասակարգի կազմակերպութիւնը
այդ ընդհանուր շահերը պաշտպանելու համար։
Աշխատաւոր դասակարգն իր թուով և կարևորու-
թեամբ դառնում է մի վիթխարի ընկերային ոյժ
և հանդէս է գալիս պատմութեան մէջ իր շի-
նարար և հանրօգուտ դերը խաղալու։

Ընկերնե՛ր, դուք տեսաք, որ դրամատիրա-
կան տնտեսութիւնն ունի իր լաւ և վատ կողմե-
րը։ Այս երկու կողմերի փոխադարձ յարաբե-
րութիւնը ամէն երկրում և ամէն տնտեսութեան
մէջ նոյնը չէ միշտ։ Այն երկրներում, ուր դրա-
մատիրական տնտեսութիւնը բարձր զարգացման
աստիճանի է հասել, այնտեղ նրա լաւ կողմերը
շատ են. ընդհակառակն՝ այն երկիրներում, ուր
այդ տնտեսութիւնը շատ չէ զարգացած, ինչպէս

օրինակ Ռուսաստանում կամ Տաճկաստանում,
այնտեղ այդ ձևի տնտեսութեան բացասական
կողմերը գերակշռող են։

Գալով տնտեսութեան ճիւղերին, մենք նկա-
տում ենք, որ արդիւնաբերութեան բարձր տե-
սակներում դրամատիրական տնտեսութեան լաւ
կողմերն աւելի շատ են, քան ստորին տեսակնե-
րում։ Այսպէս՝ այդ տնտեսութեան վատ կող-
մերը խիստ աչքի են դարկում հանքարտադրու-
թեան, առաւել ևս՝ երկրագործութեան մէջ։
Բայց այդ տնտեսութիւնը իր բոլոր կործանիչ
կողմերով հանդէս է գալիս մանաւանդ այն եր-
կիրներում, որոնք համաշխարհային մրցակցու-
թեան մէջ շատ աննպաստ դիրք ունին։

Ո՛րքան նպաստաւոր է դրամատիրական տն-
տեսութեան լաւ ու վատ կողմերի փոխադարձ
յարաբերութիւնը, այսինքն որքան այդ տնտե-
սութիւնը լաւ կողմեր շատ ունի, այնքան՝ աւելի
զարգացած է արդիւնաբերական պրոլետարը։
Իսկ որքան զարգացած է պրոլետարը (ընչազուրկ),
այնքան աւելի կարևորութիւն է ստանում նա,
համեմատած աշխատաւոր ազգաբնակութեան
միւս խաւերի հետ, որոնք նոյնպէս շահագործ-
ւում են շարաշար, ինչպէս օրինակ երկրագործ-
ներն ու մանր արհեստաւորները։

Ո՛րքան մի երկրում բազմակողմանի և հետե-
ւողական կերպով են զարգանում բուրժուական
տնտեսութեան և մասնաւոր սեփականութեան
բոլոր սկզբունքները, այնքան աւելի խիստ բա-
ժանում է նկատուում նրա ազգաբնակութեան
մէջ՝ դասակարգային տեսակէտից։ Առաջ են
գալիս խոշոր տնտեսութիւններ։ Դրամագլուխը
մեծանում է և գործի շուրջն է խմբում հաղա-

բաւոր գործաւորներ։ Ամում է անհատական սեփականութիւնը և հսկայական չափեր առնում։ Դրամատէրերը և սեփականատէրերը օրէցօր ահագին չահեր են ստանում, իսկ բանւորները համեմատաբար միշտ աւելի պակաս վարձ են առնում։

Եւ այսպիսով՝ իսկապէս ստեղծւում է երկու դասակարգ։ Նրանցից մէկը կենդրոնացնում է իր ձեռքում գիտութիւնը, որով իշխում է բնութեան ոյժերին. նրան են պատկանում գործիքները, մեքենաները, գործարանները, երկաթուղիներն ու նաւերը—մի խօսքով արդիւնաբերութեան և փոխադրութեան բոլոր միջոցները։ Իսկ միւս դասակարգը՝ աշխատաւորները, որոնք թւով անհամեմատ շատ են առաջիններից և որոնք իրենց աշխատանքով ստեղծում են հսկայական հարստութիւններ, միշտ աւելի պակաս մասն են ստանում իրենց արիւն-քրտինքով առաջ բերած այդ արդիւնքներից։ Սրանից յետոյ շատ բնական է, որ այս երկու դասակարգերի մէջ սկսւում է մի ներքին խուլ մրցում, չահերի մի հակամարտութիւն։

Այս հակամարտութիւնը, որ սկզբում աննկատելի է շատերի համար, կամաց-կամաց մտնում է հասարակութեան գիտակցութեան մէջ։ Տարբերային մղումին յաջորդում է աւելի կամ պակաս պայծառ գիտակցութիւնը։ Երբեմն մութ և անլուծելի համարած կնճիռները պարզւում են մարդու գիտակցութեան լոյսի օգնութեամբ. և որքան տարբեր դասակարգերը պարզ և որոշ են գիտակցում իրենց փոխադարձ դիրքն ու առընչութիւնը, այնքան աւելի նրանց միջև եղած հակամարտութիւնը դառնում է բացարձակ կռիւ ու մրցում։

Սակայն ամէն մի հասարակութեան մէջ մասնաւորապէս և մարդկութեան մէջ ընդհանրապէս այս նոր, դասակարգային կռւից առաջ եղած են շատ ուրիշ կռիւներ և մրցութիւններ ուրիշ հիմունքներով, որոնք կամ դեռ չեն վերջացած բոլորովին կամ թէ նրանց կայծերը մնում են դեռ մոխրաթաղ։ Այսպէս են հինաւուրց միջդասային, ցեղային, կրօնական և ազգային կռիւները իրենց դեռ չմարած հետքերով։

Դասակարգային հակամարտութիւնը, որ հասարակութեան գիտակցութեան մէջ մտնելով՝ արտայայտւում է իբրև մի կենսական մրցութիւն, գալիս ընդհարւում է վերը յիշած հին կռիւների հետքերին, խաչւում, խճողւում է նրանց հետ և այսպիսով իրերի տարբերային ընթացքին մէջ՝ գնալով չեշտւում է հաւաքական և նախահաչած միջամտութիւնը։ Դասակարգերը ընդհարումների և մրցումների այդ բուիրի մէջ աշխատում են մտցնել որոշ կարգ և հետևողականութիւն։

Շահագործող դասակարգերը իրենց ընդհանուր չահերը պաշտպանելու համար կազմում են միութիւններ։ Ծնունդ են առնում հսկայական սինդիկաները և տրեստները։ Յենած այս միութիւնների վրայ, որոնք ահագին դրամական միջոցներ ունեն, չահագործողներն իրենց ձեռքն են առնում հասարակութեան արդիւնաբերութեան և սպառման բոլոր պայմանները. արդիւնաբերում են իրենց ուզած չափով և թելադրում են իրենց ուզած գները, որովհետև միութիւններ կազմելով՝ վերացնում են մրցումը իրենց մէջ և տէր են դառնում սպառողական հրապարակին։

Գրադարան
Գիտ. Բիբ-ка СССР
Հանրապետական Գրադարան

Օգտագործելով իրանց դրամական ոյժից և ունեցած գիրքից, նրանք ձեռք են առնում նաև պետութիւնն իր բոլոր պաշտօններով և պաշտօնեաներով։ Այսպիսով պետութիւնը, որ շատերի կարծիքով պէտք է հանրութեան շահերին նուիրուած լինէր, դառնում է մի որոշ դասակարգի շահերի պաշտպան և ամրացնում է այդ դասակարգի տիրապետութիւնը աշխատաւոր խաւերի վրայ։

Դրամի տէրը լինելով՝ այդ դասակարգը դառնում է նաև կեանքի տէրը։ Թէ՛ նիւթապէս և թէ բարոյապէս նա ենթարկում է իրեն գիտութիւնը, որովհետև նրա նպաստով են ապրում գիտական հաստատութիւնները և գիտնականները։ Արուեստը դառնում է նրա աղախինը, որովհետև նա է գնում արուեստի արտադրութիւնները և նրա ճաշակն է դեկավարում արուեստագէտներին։ Վերջապէս նրան են ենթարկուում գրականութիւնն ու մամուլը, որոնք հազար բերանով նկարագրում են նրա հմայքը և պաշտպանում նրա շահերը։

Բայց այս ամէնը նրանց չի գոհացնում։ Նրանք թոյլ են համարում իրենց։ Նրանք դիմում են ուրիշ ամարդի և կործանիչ միջոցների։ Իրենց իշխանութիւնը ամուր պահելու և յարատևելու համար նրանք կապեր են հաստատում և դաշինք են կնքում հասարակութեան հինաւուրց և յետադէմ մնացորդների հետ, որոնք դեռ չեն անհետացել լիովին և մթնոլորտը վարակում են վատառողջ հովերով։ Նրանք դաշնակցում են կղերական, դասային և միապետական գաղափարները դաւանողների հետ։ Հետևելով «բաժանեա՛, զի տիրեսցես»-ի սկզբունքին՝ նրանք վառում են ցեղային, կրօնական և ազգային ատելութիւնները և կրակի վրայ իւղ թափելով՝ մթին ու ֆնասակար կրքերը բորբոքում։

Մինչդեռ կար ժամանակ, երբ բուրժուական դասերը յառաջդիմական էին և բարերար։ Այդ այն ժամանակն էր, երբ նրանք ևս իրաւազուրկ էին և տենչում էին նոյնիրաւութեան. ճգնում էին կեանքի ընթացքին մասնակից լինել իրենց նշանակութեան համեմատ։ Վաղուց արդէն անցել են այն լաւ օրերը։ Բուրժուական կարգերը արդէն սպառել են իրենց ամբողջ առաջդիմական բովանդակութիւնը. չկան այլևս ո՛չ վաղեմի թռչիչքը, ո՛չ լայն ու խիզախ գաղափարները։ Նրանք հասել են կատարեալ այլասերման։

Ահա թէ ինչո՛ւ ամենալաւ բարոյական ու մտաւոր ոյժերը գանելով հեռանում են նրանցից։ Այդ կարգերը այլևս գրաւիչ չեն ոչ պայծառ մտքերի և ոչ էլ մաքուր խղճերի համար։ Ընդհակառակն՝ այդ լաւագոյն ոյժերը օր օրի վրայ անցնում են հակառակ բանակը. այնտեղ՝ ուր իրաւազուրկներն ու շահագործուածները իրենց ազգատիկ խրճիթներում կամ մրոտ գործարաններում պատրաստում են ապագայ մարդկութեան արդար և գեղեցիկ համայնքը։

Ինքնապաշտպանութեան բնական մղումով աշխատաւոր և շահագործուող դասակարգերը մօտենում են իրար, ձեռք ձեռքի տալիս և միասին դիմում են ինքնապաշտպանութեան։ Ո՛րքան աշխատաւոր խաւերը գիտակցում են իրերի ընթացքը, իրենց անմխիթար և իրաւազուրկ կացութիւնն ու թշուառ վիճակը, այնքան աւելի ծաւալուում է նրանց միութիւնը։

Ո՛րքան այդ փրկարար գիտակցութիւնը առաջ է գնում, այնքան քշանում են մասնակի ընդհա-

բուՄՆերը և վաղանցուկ, արտաքին երևոյթների դէմ մղած կռիւները։ Սրանց տեղ առաջ է գալիս մի կազմակերպուած, խելացի և ահաւոր պայքար։ Եւ արդէն պայքարում, կռւում են ոչ թէ այս կամ այն մասնաւոր դէպքի դէմ, այլ ճնշման և հարստահարութեան, բռնութեան և չահագործումի բուն իսկ հիմքերի դէմ։ Այս կռիւը շատ աւելի կատաղի է և զօրաւոր, որովհետև նա մղւում է աշխատաւոր դասակարգի տնտեսական, քաղաքական և հոգեկան ազատագրութեան համար։ Աշխատաւորը չունի կուշտ հաց և կարգին բնակարան, նա չունի քաղաքական իրաւունքներ և իր թշուառութեան մէջ խաւար է և տգէտ. նա բարձրացնում է իր ահարկու մուրճը փշրելու համար այս երրեակ չղթան։

Ինչպէս կենսական ամէն մեծ շարժում՝ աշխատաւոր ժողովուրդի այս ազատագրական շարժումն ևս ունի իր արտայայտութիւնը. միջազգային յեղափոխական ընկերվարականութիւնը սրա ամենահետևողական արտայայտութիւնն է, սրա գիտական լուսաբանութիւնը և ընդհանրացումն է միանգամայն։

Ընկերնե՛ր, ամէն շարժում փոքր չափերով է սկսւում և եթէ կենսունակ է՝ մեծանում է և լայն չափերի է հասնում։ Այսօր ընկերվարական հոսանքը լայն ծաւալ ունի. նա ցանցել է ամբողջ աշխարհը, ամէն տեղ, ուր կայ բռնութիւն և չահագործում՝ հնչում է նրա աւետաբեր ձայնը։ Բայց շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ նա գիտակից յեղափոխական փոքրամասնութեան աշխարհահայեացքն էր միայն։

Անցան տարիներ. գերմարդկային ճիգերով այս լուսաւոր գաղափարները տարածուեցին, մը-

տան ժողովրդական խաւն երամների մէջ, դարձան նրանց մի սուրբ մասի գիտակցութիւնը և այսօր մենք հասել ենք այնտեղ, որ թէ՛, արդիւնաբերական կեդրոնների պրոլետարը և թէ՛ աշխատաւոր գիւղացին գիտակցում են արդէն, որ իրենք իսկապէս կազմում են մի մեծ դասակարգ, բանւորական մի վիթխարի բանակ։

Այսօր իրենց փրկութեան գրաւականը տեսնում են իրենց դասակարգային միութեան մէջ և արդէն իրենց բոլոր տեղական, մասնաւոր և առժամեայ չահերը մի անօրինակ անձնուիրութեամբ ստորադասում են մի չատ մեծ ու վսեմ նպատակի՝ աշխարհի սոցիալ-յեղափոխական յեղաշրջման։

Բայց ո՞րն է այդ յեղաշրջման ծրագիրը. ի՞նչ է աշխատաւոր խաւերի տենչանքը։

Վեհ է այդ ծրագիրը և պարզ միանգամայն։ Նրանք ձգտում են համայնացնել աշխատանքը, սեփականութիւնը և տնտեսութիւնը. նրանց տենչանքն է, որ ամէնքը աշխատեն միասին, ամէն հարստութիւն պատկանէ ամէնքին և ամէն տնտեսութիւն ընդհանուրինը լինի։

Նրանք պահանջում են, որ մասնաւոր սեփականութիւնը վերանայ աշխարհից. նրա հետ կը չքանան նաև բոլոր դասակարգերը։ Ունեցող-չունեցողներն են, որ կազմում են այսօրուան անարդար հասարակութիւնը և անհաւասար դասակարգերը։ Անհատական՝ մասնաւոր սեփականութեան չքացումով՝ հասարակութիւնը ՊՈՊԵՐԵՆ և ԷՐՈՐԵՆ միապաղաղ կը դառնայ։

Այսօրուան պետութիւնները որոշ դասակարգերի չահեր են պաշտպանում միայն. նրանք ըստիպողական և բռնադատող ընոյթ ունին, որով-

հետև բռնութեամբ և սուիպուսմով միայն մարդկանց մի չնչին փոքրամասնութիւն տիրում և հարստահարում է ժողովրդական հսկայ զանգուածներին, խլում է նրանց աշխատանքի արդար արդիւնքը:

Ընկերվարականները պահանջում են, որ պետութիւնը դադարէ բռնութեան և դասակարգային տիրապետութեան գործիք լինելուց: Պետութիւնը չատ աւելի բարձր նպատակ ունի. նրա պաշտօնն է սատար լինել քաղաքակրթութեան. և իր այս բարձր պաշտօնը, որ իր իսկական կոչումն է միանգամայն, նա կարող է կատարել՝ կազմակերպելով ընդհանուր աշխատանքը յօգուտ ընդհանրութեան:

Այս ծրագրի իրագործութիւնը աշխատաւոր ժողովուրդին կը տայ բարեկեցութիւն և ազատութիւն:

Հասարակական հարստութիւնը ընդհանուր առմամբ գնալով աճում է չարունակ, բայց գործաւոր մարդու վիճակը չի փոխւում: Ամենահարուստ երկիրներում մարդիկ յաճախ մեռնում են քաղցից և չքաւորութեան մէջ: Հարստութիւնը այսօր հարստահարութեան և կախման ազբիւր է: Նա պատկանում է ո՛չ թէ ամէնքին, այլ մի չընչին փոքրամասնութեան: Աշխատաւորութեան հսկայ զանգուածը կախուած է այդ փոքրամասնութիւնից, որովհետև նրանից է գործ ստանում և օրավարձ՝ ապրելու համար: Աշխատաւորի այս նեղ կացութիւնից օգուտ տալով՝ փոքրամասնութիւնը չարաչար նեղում և հարստահարում է քրտնաթոր գործաւորին և հողագործին:

Մենչդեռ եթէ հարստութիւնը համայնացած լինէր, եթէ բոլոր հարստութիւնը պատկանէր

ամենքին, այն ժամանակ որքան մի հասարակութիւն հարստանար, այնքան նրա ամէն մէկ անդամը կը հարստանար, որքան մի հասարակութիւն բարեկեցիկ լինէր, այնքան նրա ամէն մէկ անդամը գոհ կը լինէր: Ապահովելով իր ապրուստը սեփական աշխատանքով և ամէնքի ազատ ջակցութեամբ, մարդս իրեն չատ աւելի ազատ կը զգար, առանց կախումի, իբրև համայնքի և պետութեան հաւասար անդամ:

Ո՛րքան տաղանդներ կորչում են անյայտութեան մէջ՝ զուր և անօգուտ, միայն նրա համար, որ միջոց չունեն իրենց բնատուր ընդունակութիւնները զարգացնելու յօգուտ ընդհանրութեան: Ուսում և գիտութիւն, արուեստ և գեղարուեստ ունեորին են միայն մատչելի:

Ո՛րքան ոյժեր կորչում են անհետ, որովհետև կեանքի դաժան պայմանները նրանց ստիպում են անյարմար միջավայրեր, ուր նրանք կատարում են գործեր, որոնց կոչումը չունին: Մարդանհատը, որ աքանչելի ընդունակութիւններով օժտուած մի արարած է, ժամանակակից անարդար և անմիտ կարգերի մէջ անկարող է զարգացնել իր բոլոր բարձր ընդունակութիւնները և ոյժերը: Նա այլասերւում և փչանում է կեանքի պզտոր և անողոք յորձանքում:

Մարդկանց մի մասը, չահագործելով աշխատաւոր ժողովուրդի լայնածաւալ զանգուածները, յղփանում է վայելքից և անգործութիւնից: Ըստեղծում են անբնական ճաշակներ, անվայել կիրքեր և ամօթաբեր հակումներ. ստորին կարգի բնազդները արտայայտւում են անսանձ և անարդել իրենց գարշելի մերկութեամբ և իջնելով վարի խաւերը, վարակում են ամէն առողջ մթնոլորտ:

Փոխադարձաբար հասարակութեան վարի խաւերը բթանում են շարքաշ ու երկարատև մարմնական աշխատանքից: Խաւարի և տգիտութեան մէջ ծաղկում են ամէն կարգի մոլութիւններ: Ամենատարբերական պահանջներն անգամ գոհացում չեն գտնում և թշուառ մարդկութեան մի խոշոր հատուածը այս նեղ ու խեղդող կացութիւնից դուրս գալու համար՝ երկու անպատիւ և կործանիչ դուռն ունի միայն — յանցանքը և անառակութիւնը:

Մինչդեռ ընկերվարական կարգերը վերջ կը տային թէ՛ մարդու այս անվայել վիճակին և թէ ինասաբեր անհաւասարութեան: Համերաշխութիւն կը ստանար մարդկային աշխատանքն ու բարօրութիւնը: Այս նոր պայմանների մէջ մարդ-անհատն այլևս ստիպուած չէր լինի այլասերելու և փչանալու անգործութիւնից կամ չարքաշ աշխատանքից:

Միայն այս պայմանների մէջ մարդկային անհատը կարող է բազմակողմանի և ներդաշնակ զարգանալ: Մարդը այլևս չի նեղուիլ քաղցից կամ ցրտից և նրա բոլոր ոգեկան ոյժերը անարգել թռիչք կը ստանան: Այս կարգերի մէջ միայն երևան կը գայ մարդու բովանդակ ոյժն ու կարողութիւնը յօգուտ ընդհանրութեան:

Այս տեսակէտից նայելով՝ ընկերվար-յեղափոխականութեան գործը ամբողջ մարդկութեան ազատագրութեան գործն է: Այսպիսով ո՛չ միայն աշխատաւոր դասակարգն է որ պիտի փրկուի, այլև համայն մարդկութիւնը:

Երբ վերանան դասակարգերը և անհաւասարութիւնը, կը վերանան նաև ամէն կարգի կռիւ-

ները մարդկութեան միջից և կը չքանան բռնութեան և շահագործման այն բոլոր ձևերը, որ մարդիկ ստեղծել են իրենց նման մարդկանց տիրելու համար: Այլևս մէկը միւսին չի շահագործի, ամէնքը վիճակակից և բախտակից կը լինեն և կը բարձրանան հաւասարապէս:

Այս նպատակին հասնելու համար յեղափոխական-ընկերվարականութիւնը աշխատում է օգտուել երկու նպաստաւոր պայմաններից: Առաջինը մարդկութեան տնտեսական զարգացման դրական կողմերն են. մենք տեսանք, որ այսօրուան դրամատիրական տնտեսութիւնը մի շարք դրական կողմեր ունի, որոնք գնահատելի են ապագայ մարդկութեան նորաստեղծ կեանքի համար: Երկրորդը՝ բանւոր զանգուածների ստեղծագործական ընդունակութիւնն է. ժողովուրդը, կամ որ նոյնն է՝ աշխատաւոր խաւերը ընդունակ են բեղմնաւոր և ստեղծագործող աշխատանքի. պատմական և առօրեայ փորձը ցոյց է տալիս, որ նրանք կարող են կենցաղի նոր և կատարեալ ձևեր յղանալ և իրագործել:

Ահա թէ ի՛նչ բարձր մտքեր, ազնիւ տենչեր և լայն ծրագիրներ են զբաղեցնում այսօր ամբողջ աշխարհի ընկերվարականներին: Ամենքն իրենց երկրի մէջ, իրենց ժողովուրդին մայրենի լեզուով քարոզում և մեկնում են այս գաղափարները, ներարկում են մի հսկայ բանակ՝ ապագայ չերը և կազմում են միջազգային պատերազմի համար:

Մենք, ռուս ընկերվարականներս, մեզ նկատում ենք իբրև այս մեծ բանակի զօրամասերից մինը: Ճգնում ենք մեր գործունէութիւնը այսպէս վարել, որ չհակասէ և չվնասէ միջազգային

ընկերվարութեան չահերին։ Մենք գործում ենք միևնոյն ուղղութեամբ, միևնոյն ոգով, միևնոյն նպատակների համար, բայց մեր գործունէութեան ձևերը տարբեր են, որովհետև տարբեր է՛ն միջավայրը, ուր գործում ենք, և այն պայմանները, որոնց մէջ կռւում ենք։ Մենք հարուածում ենք միևնոյն կէտին, բայց տարբեր ձևով։

* *

Ընկերնե՛ր. մինչև այստեղ ես աշխատեցի պարզել ձեր առաջ մեր հայեացքը մարդկութեան զարգացման վրայ ընդհանրապէս. դուք լսեցիք մեր կարծիքը անցեալի մասին և մեր յոյսերը՝ ապագայի համար։ Այժմ ես կը դառնամ Ռուսաստանին մասնաւորապէս։

Դրամատիրական տնտեսութեան ձևերը արդէն մտել են Ռուսաստան։ Ինչպէս ամէն տեղ, այնպէս էլ մեր երկրում տնտեսութեան այդ ձևը հանդէս է գալիս իր երկու կողմերով, որոնք նման չեն իրար։ Մի կողմից մենք նկատում ենք այդ տնտեսութեան առաջադէմ և ստեղծագործող կողմերը, որոնք պատմական ապագայ ունին. միւս կողմից նրա մութ ու կործանիչ կողմերը, որոնք դատապարտուած են ոչնչանալու։

Բանւորական խաւերի շահերի տեսակէտից դրամատիրական տնտեսութեան այս երկու կողմերը չափազանց աննպաստ համեմատութիւններ ունին. վնասակար ու մութ կողմերը շատ աւելի են, քան օգտակար և լուսաւոր կողմերը։ Այս երևոյթը մեր ընկերական զարգացման յատկորոշ գծերից մէկն է։

Դրամատիրական տնտեսութեան զարգացման

հետ կապուած են մի շարք տագնապներ։ Եւրոպական բոլոր երկիրները կրած են այդ տագնապները, բայց երկար ժամանակի ընթացքում, դանդաղօրէն և որոշ կարգով։ Այս կողմից մեր երկիրը խիստ աննպաստ վիճակի մէջ է։ Մեր քաղաքակրթութեան մակարդակը շատ ստոր է. մենք յետ ենք մնացել Եւրոպայից թէ՛ մեր կրթութեամբ և թէ մեր կառավարական կազմով։ Եւ զարգացման այս ստոր աստիճանի վրայ մեր ժողովուրդը կրում է դրամատիրական նոր կարգերի բոլոր վնասակար հետևանքները շատ կարճ ժամանակում և ամփոփ՝ կուտակուած ձևով։ Մենք տնտեսապէս ապրում, զարգանում և տառապում ենք արագ. դեռ չյարմարուած տնտեսական զարգացման նոր պայմաններին, վրայ են հասնում աւելի նորերը։ Այս ամէնը սուր կերպարանք է տալիս ընկերային (սոցիալական) հարցին՝ մեր երկրում։

Նա սրւում է նաև հետևեալ պատճառներով։ Մեր երկրում մարդուն չահագործում են ամենանախնական և բիրտ ձևերով. միւս կողմից դեռ կանգուն է հինաւուրց միապետութիւնը, որ յենւում է մի կողմից հողատէր ազնւականութեան, միւս կողմից հլու պաշտօնէութեան վրայ։ Այս յետադէմ և վայրագ կառավարութիւնը չափազանց դանդաղ է փոխում իր վարչական ձևերը, որովհետև բիրտ չահագործումը շատ լաւ յարմարւում է վայրագ ինքնակալութեան և երկուսը դաշնակցած իրար՝ խեղդում են ռուս կեանքի բոլոր յառաջադէմ արտայայտութիւնները։

Մինչդեռ այս խաւար ուժերի կողքին արդէն գոյութիւն ունի մի բազմամարդ մտաւորական դասակարգ, որ տոգորուած է ընկերվարական գա-

զափարներով։ Այս ոյժը շատ նոր է համեմատած իր մրցորդների հետ. անխիղճ շահագործութիւնը և վաղեմի ինքնակալութիւնը խոր պատմական անցեալ ունին. փոխադարձաբար թարմ մտաւորականութիւնը հարուստ է եւրոպական ընկերների ընկերվար կուսակցութիւնների պատմական փորձով։ Այս երկու ծայրայեղօրէն հակադիր ուժերը շատ սուր կերպարանք են տալիս թէ՛ ընկերային (սոցիալական) հարցի դրելուն և թէ մաքառումի և կռւի ձևերին մեր երկրում։

Ռուս գիւղի արդիւնաբերութեան ուժերը սպառուած չեն թէև, բայց ջլատուած են արդէն։ Սրա պատճառը նախ բիւրօկրատ պետութեան վարչական յօրինուածքի հսկայական զարգացումն է. նա սպանել է ամէն ինքնագործութիւն և նախաձեռնութիւն. հազար ձեռքով նա սեղմում է գիւղացու կոկորդը։ Ցետոյ գալիս են այն պայմանները, որոնց մէջ ռուս գիւղացին յիսուն տարի առաջ ազատուեց ճորտութիւնից. նա ստացաւ շատ վատ հող և շատ փոքր չափով. նա պարտաւոր էր յետ գնել իր չնչին հողաբաժինը և վճարել մեծ քանակութեամբ տուրքեր։ Վերջապէս երրորդ պատճառն է վաշխառութեան բոլոր ձևերի և տեսակների լայնածաւալ զարգացումը։

Աշխատաւոր գիւղացին իր չնչին և ուժասպառ հողաբաժնից չի կարողանում իր ընտանիքի ապրուստը հանել. նա օրէցօր մեծ խմբերով դիմում է կողմնակի աշխատանքներին, որ մի կերպ կարողանայ իր ողորմելի գոյութիւնը պահպանել և ծանր տուրքերը վճարել։ Նա դառնում է վարձուր այս կամ այն աղայի մօտ և իր բազմավաստակ ու չարքաշ աշխատանքի փոխարէն

ստանում է մի չնչին եկամուտ, որ հազիւ հաւասարւում է քաղաքների թշւառ ընչազուրկի աղքատիկ օրավարձին։

Այսպիսով մեր ժողովուրդի հսկայ մեծամասնութիւնը՝ քաղաքների գործաւորը և աշխատաւոր գիւղացին՝ չափազանց չնչին եկամուտ ունենալով՝ շատ քիչ բան կարող են սպառել մեր արդիւնաբերութեան արտադրութիւնից։ Մեր ներքին շուկան գնալով փոքրանում և նեղանում է։ Մենք չունենք գաղութներ, ուր սպառէինք մեր ապրանքները. նրանք պէտք է ծախւին միմիայն մեր երկրի մէջ, իսկ սպառողը ժողովուրդն է, որ չքաւոր լինելով՝ գնել չի կարող։ Այսպիսով մեր տնտեսութիւնը տառապում է թէ՛ ներքուստ և թէ արտաքուստ։

Մեր երկրի ագգաբնակութիւնը օրէցօր աճում, բազմանում է. զուգընթացաբար շատանում է գործազուրկ աշխատաւորների թիւը։ Ստեղծւում է գործաւորների մի սաւար պահեստի բանակ, որ ապրուստի համար դուրս է գալիս մրցութեան և դրանով իջեցնում բանւորների առանց այն էլ ողորմելի օրավարձը։ Աշխատաւոր դասակարգերը մի կողմից մղւած իրենց անմիջական կարիքներից, միւս կողմից ընկերվար մտաւորականութեան ազդեցութեան տակ՝ մըտանում են կռւի ասպարէզ ժամանակակից լաւագոյն պահանջներով։ Եւ այս շարժումը կատարւում է մի երկրում, ուր մինչև այսօր իշխում են նահապետական և ոստիկանական դաժան կարգերը։

Այս կարգերը մինչև այսօր ճնշել և ճնշում են ամէն անհատական և հաւաքական նախաձեռնութիւն և այս ճնշումը համարում են իրենց

զությեան պայմանն ու հիմքը։ Մեր երկրի խոշոր արդիւնաբերական և առևտրական դասակարգը, որ մեզանում շատ աւելի յետադէմ է, քան որևէ ուրիշ տեղ, տեսնելով աշխատաւորութեան ընդդիմադիր բանակը, որ կազմակերպւում է սպառնալից, օրէցօր աւելի կարիք է ըզգում դաշնակցելու ինքնակալութեան հետ՝ ընդդէմ արթնացող գործաւորի։

Միւս կողմից հողատէր ազնուականները և գիւղական ամէն կարգի վաշխառուները նոյն տեսակ սրտակից համերաշխութեան կարիք են ըզգում՝ ընդդէմ գիւղական աշխատաւոր զանգուածների, որոնք ոտքի են ելնում «հողի և ազատութեան» անունով։

Միապետութիւնը և նրա պաշտպաններն ու հաւատարիմ դաշնակիցները՝ պաշտօնէութիւնը, հոգևորականութիւնը (կղերականութիւնը), հողատէր ազնուականը, խոշոր դրամատէրն ու գիւղի վաշխառուն՝ նկատելով խոնարհ խաւերից եկող վտանգը՝ դիմում են ինքնապաշտպանութեան ամէն միջոցի։

Նրանք աւելի և աւելի ճնշում են այն մանր ազգութիւնները, որոնց նւաճել է կայսերական Ռուսաստանը, ցանում են լիաբուռն ազգային, կրօնական և ցեղային հակամարտութեան և թշնամութեան սերմեր։ Այսպիսով նրանք արգելք են դառնում, որ բոլոր ազգերի աշխատաւոր խաւերը գիտակցեն իրենց ընդհանուր թշուառութիւնը, միանան և կռւի դուրս գան իրենց ընդհանուր թշնամու դէմ։

Այս կարգերը հակասում են մեր երկրի թէ՛ տնտեսական, թէ՛ կենսակրթական (կուլտուրական) և թէ քաղաքական-ընկերային արգասաւոր զարգացման և այս հակասութիւնը գնալով միշտ աւելի սուր կերպարանք է ստանում։

Ահա այսպէս, ընկերնե՛ր, ռուս ինքնակալութիւնը մեր երկրում ամէն տեսակ մակաբոյծ տարրերի համար հանդիսանում է իբրև մի զօրեղ և յուսալի յենարան. ամէն կարգի բռնաւորներ և չահագործողներ որոնում են նրա հովանին և եռանդով պաշտպանում են նրա հմայքը։

Այսպէս է նա մեր երկրում։ Իսկ մեր երկրից դուրս նա նոյնքան աղէտաւոր է մարդկութեան համար և խաղում է մի ստոր դեր։ Իր զօրեղ ժամանակ նա միշտ եղել է եւրոպական յետադիմութեան ամենամեծ և անառիկ բերդն ու մարտկոցը։ Լուսաւոր երկիրների բանւորական կուսակցութիւնների, նրանց վարած ազատագրական պայքարի և կռւի համար նա միշտ հանդէս է եկել իբրև ամենաահաւոր սպառնալիքը։

Նա կասեցնում է միջազգային յառաջդիմութեան ընթացքը, նա թունաւոր է կանգնեցնում նրա վերկարար հոսանքի առաջ. ուստի այդ բռնապետութեան ոչնչացումը ա՛չ միայն բարիք կը լինէր մեր երկրի համար, այլև բովանդակ մարդկութեան համար։

Սակայն որո՞նք են ռուս ազգի այն խաւերը, որոնք կռիւ են մղում ինքնակալութեան և նրա բռնաւոր կարգերի դէմ։ Մեզանում կայ մի ուսաւոր ընդդիմադրական խումբ, որ դասակարգային տեսակէտից շատ անորոշ է, որովհետև այնտեղ մտնում են մեր ազգի ամէն խաւերից ելած անհատներ։ Այս խումբը տոգորուած է ազատամիտ և ռամկավար տենչերով. «Կիրթ հասարակութիւն» կոչուած է այս խումբը, որ սակայն ժողովրդական զանգուածներ չունի իրեն հե-

տեւող. նա մենակ է։ Այսպիսով ինքնակալութեան դէմ մղող պայքարի բովանդակ ծանրութիւնը ընկնում է գործաւորի, աշխատաւոր գիւղականի և ընկերվար-յեղափոխական մտաւորականութեան վրայ։

Նկատելով ուրեմն, որ աշխատաւոր տարրերն են իսկական մարանչողներն ու ռազմիկները այս մեծ ազատամարտում, մեր կուսակցութեան համար անհրաժեշտ է դառնում յեղափոխութեան գերագոյն վայրկեանին ամէն ճիգ թափել լայնացնելու և խորացնելու այն բոլոր ընկերային (սոցիալական) և կայքատիրական փոփոխութիւնները, որոնք կապուած պիտի լինեն ինքնակալութեան տապալման հետ։

Այս աղէտաւոր կարգերի վերացման սրբազան ժամին պէտք է փոփոխուեն նաև դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնները և սեփականութեան ձևերը։ Կուսակցութեան գերագոյն պարտականութիւնն է ամէն կերպ ջանալ, որ ձեռք բերած փոփոխութիւնները որքան կարելի է նպաստաւոր լինեն աշխատաւոր խաւերին։

Յեղաշրջման այս խորացումն ու լայնացումը անհրաժեշտ է նաև մի ուրիշ նկատումով։ Քաղաքական և տնտեսական տաղնապները անխզելի կապերով շղթայուած են իրար։ Աշխատաւոր ժողովուրդը ձգտում է ստեղծել ո՛չ միայն լաւագոյն քաղաքական կարգեր, այլև լաւագոյն տնտեսական յարաբերութիւններ, որովհետև նա ճնչուած է թէ՛ բռնակալութեան և թէ՛ դրամատիրութեան և թէ խոշոր հողատիրութեան ձեռքին։ Ու երբ խորտակուում են քաղաքական հին կարգերը, ամենանպաստաւոր ժամն է նաև տնտեսական կարգերն այնպէս փոխելու, որ յեղա-

փոխութեան իսկական մարտիկները ամենալաւ և ամենալայն չափով օգուտին։

Մեր ծրագիրը ամբողջովին կարող է իրականանալ միմիայն մի պայմանով. յեղափոխութեան ժամանակ աշխատաւոր դասակարգը պէտք է կատարեալ յաղթութիւն տանէ։ Դրամատիրական բովանդակ սեփականութիւնն արտագրաւել, հասարակական տնտեսութիւնն հիմնովին վերակազմել և ամբողջ ընկերային կազմը ընկերվարական նոր ու հաստատուն հիմերի վրայ դնել — այս է մեր ծրագրի ամբողջական իրականացումը։ Այս նպատակին հասնելու համար աշխատաւոր դասակարգն ամբողջովին պէտք է կազմակերպուի իբր մի հսկայական և լայնասփիւռ ընկերվարական կուսակցութիւն։ Նա պէտք է միահամուռ և ներդաշնակ ոյժերով առաջ վարէ իր սրբազան պատերազմը և եթէ հարկը պահանջէ՝ նա, մեր ծրագրին համաձայն՝ կարող է ստեղծել բանւոր դասակարգի ժամանակաւոր իշխանապետութիւն (դիկտատուրա)։

Բայց այդ ցանկալի օրը դեռ շատ հեռու է։ Այսօր բանւոր դասակարգը դեռ չէ կազմակերպուած լիովին։ Իր թիւով նա մարդկութեան հսկայ մեծամասնութիւնն է. բայց կազմակերպուած բանւորութիւնը մի փոքրամասնութիւն է առայժմ։ Իբրև փոքրամասնութիւն՝ նա կարող է միայն մասնակի ազդեցութիւն ունենալ ներկայիս հասարակական կազմի փոփոխութեան և օրէնսդրութեան ընթացքի վրայ։

Այս մասնակի կռիւների և ընդհարումների ժամանակ հնարաւոր է երկու վերաբերում դէպի մարդկութեան յեղաշրջման գործը։ Ջանալով

ձեռք բերել մասնաւոր գիջումներ և փոփոխութեան ենթարկել հասարակական կազմի այս կամ մասը, պայքարող կուսակցութիւնները յաճախ մոռանում են չարժման վերջնական նպատակը և անձնատուր են լինում ընթացիկ պայքարին։ Այսպէս՝ ջանալով ձեռք բերել ութ ժամեայ բանուորական օր, յաճախ մոռանում են, որ մեր նպատակը ոչ թէ ութ ժամեայ բանուորական օրն է, այլ ընկերվարական կարգերի վերջնական յաղթանակը։ Միջոցը համարւում է նպատակ և կասեցնում է աշխատաւոր դասակարգի յառաջընթացութիւնը։

Մեր կուսակցութիւնը ուրիշ վերաբերում ունի այս հարցի հանդէպ։ Մենք աշխատում ենք միշտ վառ պահել աշխատաւոր դասակարգի գիտակցութիւնը և ջանում ենք ա՛յնպէս վարել մեր գործունէութիւնը, որ մասնաւոր գիջումների և կռիւների քաղաքականութիւնը չծածկէ բանուոր դասակարգի աչքերից մեր և նրա մղած կռիւի վերջնական նպատակը՝ ընկերվարութիւնը։

Հիմա հարց է թէ ի՞նչ տեսակ մասնաւոր գիջումներ պէտք է կորզել ժամանակակից կարգերից։ Այս մասին մեր տեսակէտը շատ որոշ է։ Ամէն գիջողութիւն համարժէք չէ մեզ համար։ Մենք պէտք է աշխատենք ձեռք բերել այն տեսակ գիջումներ, որոնք ընդունակ լինեն բանուոր դասակարգը ամէն կողմով զօրացնելու։ Մեր ձեռք բերած փոփոխութիւնները պէտք է նպաստեն աշխատաւոր դասակարգի խմբումին և սերտ միութեան, պէտք է մարդեն նրա ազատարար կռիւը մղելու ընդունակութիւնները, պէտք է սատարեն նրա մտաւոր զարգացման, բազմացնեն և բարձրացնեն նրա կիրթ պահանջները, ամրացնեն նրա ռազմական դիրքերը և հեռացնեն այն բոլոր խոչնդոտները, որոնք արգելք են դառնում աշխատաւոր խաւերին կազմակերպելու և մի հոծ ու ահաւոր բանակ կազմելու։

Այս է մեր կարծիքը Ռուսաստանի ներկայ վիճակի և ազատագրական կռուի պայմանների մասին։

* * *

Ընկերնե՛ր. հիմք առնելով վերը յիշատակած բոլոր նկատումները, մեր կուսակցութիւնը ամէն կերպ ջանալու է պաշտպանել, այժ տալ կամ իր յեղափոխական կռուով կորզել հակառակորդ բանակից հետեւեալ տնտեսական և քաղաքական փոփոխութիւնները.—

ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԻՐԱՒԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ։ — Անհատը իբրև մարդ և իբրև որոշ երկրի քաղաքացի՝ մի շարք անբռնաբարելի իրաւունքներ ունի, որոնք ընդունուած են եւրոպական շատ երկիրներում և մենք պահանջում ենք, որ մեր երկրում ևս ճանաչուեն։ Սրանք են՝ խղճի, խօսքի, մամուլի, ժողովների և միութիւնների կատարեալ ազատութիւնը։

Ամէն մարդ պէտք է կատարեալ ազատութիւն ունենայ դաւանելու այն կրօնը կամ կարծիքը, որ ինքը ճշմարտութիւն է համարում, առանց բռնանալու ուրիշի դաւանանքի վրայ։ Նա պէտք է կարողանայ ազատ և անկաշկանդ մտածել և խորհիլ և իր միտքը, կարծիքը կամ համոզումը ազատ և անարգիլ քարոզել և տարածել թէ՛ բերանացի, թէ՛ գրաւոր, թէ՛ մասնաւոր շրջաններում և թէ՛ հրապարակներում։

Ինչպէս անհատը, այնպէս էլ խմբերը պէտք

է ազատ լինեն իրենց միտքը, զգացումն ու համոզումը արտայայտելու մամուլի և գրականութեան մէջ՝ ընկերական, կրօնական և գիտական ամէն կարգի նիւթերի մասին, առանց վախենալու բանտից, աքսորից կամ պետական ուրիշ կարգի պատուհասներից։

Մարդիկ պէտք է բոլորովին ազատ լինեն հաւաքուելու միատեղ ե՛րբ և ի՛նչ նպատակով էլ ուզեն և ո՛րտեղ էլ ցանկանան. նրանք պէտք է կարողանան խմբուել թէ որոշումներ կայացնելու, թէ՛ կարծիքներ փոխանակելու, թէ՛ գաղափարներ տարածելու և թէ իրենց զայրոյթը յայտնելու այս կամ այն երևոյթի առիթով։

Վերջապէս մարդիկ պէտք է ազատ լինեն ամէն տեսակ միութիւններ կազմելու՝ գիտական, արուեստական, գրական, սպառողական, արդիւնաբերական և այլն։

Մարդիկ պէտք է ազատ լինեն տեղափոխուելու մի երկրից միւսը կամ երկրի մի կողմից միւսը, նայած իրենց կարիքներին և յարմարութեան. անցագրերը և նրանց հետ կապուած բոլոր ձևականութիւնները պէտք է վերացուեն։ Ամէն մարդ պէտք է ազատ լինի նաև իր պարապմունքների ընտրութեան մէջ. պէտք է կարողանայ իր նախընտրած գործով զբաղիլ։

Մարդիկ պէտք է իրաւունք ունենան հաւաքաբար մերժումներ անելու, հաւաքաբար չաշխատելու՝ եթէ պայմանները ձեռնտու չեն, որ ասել է՝ գործադուլների կատարեալ ազատութիւն պէտք է լինի և գինեալ կամ ուրիշ կարգի միջամտութիւնները պէտք է արգիլուեն։

Պէտք է թագաւորէ անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն. կասկածով մարդիկ ձերբակալելը, նրանց երկար ժամանակ առանց դատի և քննութեան բանտերում պահելը, ուզած ժամանակ մարդու տունը մտնելն ու խուզարկելը խստիստ պէտք է վերանան։

Պետական իշխանութիւնը, որ այսօր կեդրոնացած է ինքնակալի և իր ստոր բարեկամների ձեռքում, պէտք է անցնի ժողովրդի ընտրած մարդկանց ձեռքը։ Եւ որովհետև թէ՛ պատերազմը և թէ խաղաղութիւնը, թէ՛ քրիստոնեայ թէ թէ քաղաքացիական օրէնքները, թէ՛ հարկերը և թէ մաքսերը. մի խօսքով՝ ամբողջ պետութեան կեանքը ազդում են այս կամ այն ձևով՝ ամէնքի վրայ, ուստի և ամէնքը պէտք է մասնակցեն պետական ընդհանուր կեանքին՝ իրենց ընտրեալների միջոցով։ Ամէն ոք, որ 20 տարեկան է արդէն, լինի նա ռուս թէ հայ, քրիստոնեայ թէ այլադաւան, այր թէ կին՝ իրաւունք պիտի ունենայ մասնակցելու պետական պաշտօնեաների ընտրութեան և ի հարկին՝ ինքն ընտրուելու։

Քէարկութիւնը պէտք է գաղտնի կատարուի, որպէսզի ամէն մարդ ազատօրէն իր քուէն տայ ցանկացած մարդուն, առանց քաշուելու կամ վախենալու որևէ խմբից կամ անհատից։ Ընտրութիւնները պէտք է լինեն ուղղակի, այսինքն ամէն պաշտօնատար անձնաւորութիւն պէտք է ուղղակի ժողովրդի կողմից ընտրուի և ո՛չ թէ ինչպէս լինում է յաճախ՝ ժողովուրդն ընտրում է լիազօրներ և սրանք իրենց կողմից ընտրում են պաշտօնատար անձերին։

Այս հիմքերով Ռուսաստանում պէտք է հաստատուել ռամկավար հանրապետութիւն, ինքնակալութիւնը պէտք է չքանայ և նրա տեղ ժողովուրդն ինքը իշխէ իր վրայ։ Այս ռամկավար

հանրապետութեան մէջ ամբողջ իշխանութիւնը չպէտք է կեդրոնանայ մի մարմնի ձեռքում. նա պէտք է բաժան-բաժան լինի: Ամէն շրջան և համայնք իր գործերի կատարեալ տէրը պէտք է լինի. գիւղերը, գիւղախմբերը և քաղաքները պէտք է լայնօրէն ինքնավար լինեն, իրենց գործերը իրենք կառավարեն:

Սակայն Ռուսաստանը շատ ընդարձակ է և բազմաթիւ ազգեր են ապրում այնտեղ, որոնք ունեն իրենց ուրոյն բարքն ու լեզուն, իրենց պատմական անցեալը: Ի՞նչ պիտի լինի սրանց վիճակը: Մանր ազգերի վերաբերմամբ մեր կուսակցութիւնը պահանջում է, որ ճանաչուի նրանց ինքնորոշման իրաւունքը լիապէս. եթէ որևէ ազգի մեծամասնութիւնը ցանկանայ՝ այդ ազգը պէտք է կարողանայ վարչապէս և օրէնսդրապէս առանձնանալ Ռուսաստանից: Նա կարող է ունենալ իր սեփական խորհրդարանը և ուրոյն վարչութիւնը՝ իր յարմար դատած ձևով:

Որքան կարելի է, պէտք է աշխատել, որ զատուած ազգերը կապուեն դաշնակցական կապերով. այսինքն իրենց կեանքի որոշ կողմերով նրանք պէտք է կապուած լինեն համայն Ռուսաստանի հետ և որոշ կողմերով՝ անկախ: Թանգ գնահատելով ամէն կարգի փոքրամասնութեան իրաւունքները, մենք պահանջում ենք համեմատական ներկայացուցչութիւն, այսինքն՝ ամէն կուսակցութիւն կամ խմբակ պէտք է իր թուի համեմատութեամբ ներկայացուցիչներ ունենայ:

Մենք պահանջում ենք ուղղակի օրէնսդրութիւն, այսինքն՝ ամէն օրէնք կարող է ոյժ ստանալ և օրէնք ճանաչել միմիայն այն ժամանակ, երբ ամբողջ ժողովուրդի կողմից քւէարկուի և նրա

հաւանութիւնը ստացուի: Օրէնսդրական այս ձևը կոչւում է հարցում (ռէֆէրէնդում), որովհետև հարցնում են ժողովուրդին և նրա կամքն առնում: Բացի այս, որոշ թիւով քաղաքացիներ պէտք է իրաւունք ունենան նոր օրինագծեր առաջարկելու պատգամաւորական ժողովին՝ քննելու համար: Սրան կ'ասեն օրէնսդրական նախաձեռնութիւն (ինիցիատիվ): Ցաճախ պատգամաւորներն անգամ չգիտեն թէ ի՛նչ օրէնքներ են անհրաժեշտ ժողովուրդին. օրէնսդրական նախաձեռնութիւնը առնում է այդ անյարմարութեան առաջը:

Բոլոր պաշտօնեաները պէտք է ընտրուեն ժողովուրդի կողմից: Ամենամեծից մինչև ամենաաննշանը կարող են դատի ենթարկուիլ և արտաքսուիլ, եթէ որևէ զեղծում կամ ապօրինութիւն կատարեն: Միայն դատաւորները ընտրելու են ցմահ և պատգամաւորները չեն կարող հեռացուել իրենց օրինական ժամանակը լրացնելուց առաջ, եթէ, իհարկէ, երկուսն էլ որևէ քրէական կամ ուրիշ յանցանք չեն գործել: Դատավարութիւնը պէտք է ձրի լինի. ո՛րքան արդար դատեր կորչում են անվճիռ, որովհետև տուժող կողմը դրամ չունի իր դատը վարելու:

Հակառակ լինելով ամէն տեսակ ազգային ճնշման և բռնութեան, մենք պահանջում ենք, որ մայրենի լեզուն մտնէ բոլոր պետական և հասարակական հիմնարկութեանց մէջ: Թէ՛ դատական և թէ վարչական ամէն հիմնարկութեան, ինչպէս նաև ամէն տեսակ հաստատութեանց մէջ պէտք է իշխէ և գործածուի այն լեզուն, որով խօսում է շրջանի ազգաբնակութիւնը:

Ամբողջ ժողովուրդը պէտք է ստանայ հաւա-

սար կրթութիւն՝ պետական հաշուով։ Կրթութիւնը պէտք է պարտաւորիչ լինի ամէնքի համար և պէտք է աշխարհիկ բնաւորութիւն ունենայ. կրօնը ամէն մարդու խղճի գործը լինելով՝ չպէտք է աւանդւի դպրոցների մէջ։

Սակայն կան շատ շրջաններ, ուր ազգաբնակութիւնը խառն է. թիւրքը, հայն ու ռուսը, օրինակ ապրում են քով-քովի։ Ի՞նչպէս պէտք է վարուել այս դէպքում։ Մեր կարծիքով այն գումարները, որ յատկացնում է պետութիւնը կրթական նպատակների համար, պէտք է բաժանել այս ազգերին՝ իրենց թուի համեմատ։ Այնուհետև ամէն ազգութիւն այդ գումարները պէտք է ծախսէ ինքնավար հիմունքներով. այսինքն՝ ինքը պէտք է ընտրէ որոշ անձեր, որոնք և կը տնօրինեն թէ այդ դրամը ի՛նչպէս և ինչի՛ վրայ պիտի ծախսւի։

Եկեղեցին պէտք է բաժանել պետութիւնից։ Եկեղեցին ամէն ժամանակ պաշտպանել է խաւարն ու բռնութիւնը, ուստի և կառավարութիւնը միշտ նպաստել է նրան. մահմեդականի հարկից գոյացած դրամով կառավարութիւնը տուել է ռուս քահանայի ռոճիկը։ Բայց կրօնը ամէն մարդու խղճի գործն է, ուստի ամէն մարդ ազատ է նպաստելու իր դաւանած եկեղեցուն։ Պետութիւնը իր ամբողջութեամբ չպէտք է գործ ունենայ եկեղեցու հետ։

Վերջապէս՝ մենք պահանջում ենք վերցնել մշտական զօրքը, որ մի ծանր բեռ է ժողովուրդի մէջքին։ Հայրենիքը ամէնքին լինելով՝ ամէն մարդ պարտաւոր է վտանգի ժամին պաշտպանել նրան։ Երբ ամէն մարդ զինուոր լինի, այն ժամանակ մշտական զօրքի կարիք չի լինի,

կը վերանան երկարամեայ զինուորութիւնը և նրա հետ կապած հրէշաւոր ծախքերը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ։ — Ընկերնե՛ր. դուք ծանօթացաք ուրեմն մեր քաղաքական պահանջների հետ. անցնենք այժմ մեր տնտեսական պահանջներին։ Մենք պահանջում ենք այն տեսակ տնտեսական փոփոխութիւններ, որոնք պէտք է նպաստեն աշխատաւոր դասակարգի դարգացման և բարեկեցութեան և պատրաստեն ընկերվարութեան վերջնական յաղթանակը։

Պետական տնտեսութեան և ելևմտական (ֆինանսական) քաղաքականութեան մէջ մենք ամէն կերպ ջանալու ենք մտցնել յառաջդիմական (պրոգրէսիվ) տուրք եկամուտի և ժառանգութեան վրայ։ Այսինքն՝ օրէնքով ամէն մարդ պէտք է պարտաւոր լինի վճարելու իր տարեկան եկամուտի և ստացած ժառանգութեան որոշ տոկոսը և որքան մեծ լինի այդ ժառանգութիւնը կամ եկամուտը, այնքան աւելի մեծ տոկոս պէտք է վճարէ։ Սակայն ամէն եկամուտ հարկ վճարելու չէ։ Երկրի ընդհանուր պատգամաւորական ժողովը պէտք է որոշէ մի նուազագոյն չափ եկամուտների համար։ Այդ չափից պակաս եկամուտ ստացողները հարկ չպէտք է վճարեն։

Մենք պէտք է աշխատենք վերացնել բոլոր անուղղակի հարկերը, բոլոր հովանաւորական մաքսերը և ընդհանրապէս այն բոլոր տուրքերը, որոնք վերջիվերջոյ ընկնում են աշխատաւոր ընդհանրութեան վրայ։ Այսպէս՝ կառավարութիւնը օտար շաքարի վրայ ահագին մաքս է դրել, որպէսզի մեր երկրի շաքարը ծախւի, կառավարութիւնը ցանկանում է հովանաւորել շաքարի ռուս արդիւնաբերողներին և միլիոնաւոր ժողովուրդը

մի քանի գործարանատէրերի պատճառով պարտաւորուած է թանկ գնով չաքար գնելու։ Կառավարութիւնը ամէն մի տուփ լուցկիից որոշ տուրք է առնում և միլիոնաւոր ժողովուրդը ահագին տուրք է վճարում անուղղակի կերպով։ Այս տեսակ տուրքերն ու մաքսերը ոչ թէ պիտի առնել այնպիսի ապրանքներից, ինչպէս չաքարն ու լուցկին, որոնք անհրաժեշտ են աշխատաւոր ընդհանրութեանը, այլ պէտք է առնել զարդարանքի և պերճանքի առարկաներից, որոնք միայն հարուստներն են վայելում և որոնց համար բնաւ ծանր չէ այդ հարկերը վճարել։

Դուք տեսաք արդէն, որ մեր կուսակցութեան հիմերը կազմում են երկու մեծ դասակարգ · քաղաքի գործաւորը և աշխատաւոր գիւղացին։ Այս երկու դասակարգի տնտեսական վիճակը նոյն չափով ծանր է։ Երկուսի վիճակն էլ պէտք է բարեփոխել, ուստի մեր ծրագրով որոշած ենք այն բոլոր անհրաժեշտ և հիմնական բարեփոխութիւնները, որ պէտք են նրանց։

Աշխատաւոր դասակարգը միապաղաղ ամբողջութիւն չէ · նա ինքը բաժանուած է տարբեր խաւերի։ Կան շահեր, որոնք վերաբերում են ամենքին՝ բանւորութեան ընդհանրապէս, բայց և կան շահեր, որոնք վերաբերում են այս կամ այն գործաւորական խաւին։ Մեր նպատակն է պաշտպանել այն շահերը միայն, որոնք ընդհանուր են բովանդակ աշխատաւորութեան համար։ Բոլոր նեղ-գործնական, անմիջական, տեղական և արհեստակցական շահերը պէտք է ստորադասեն բանւորութեան ընդհանուր շահերին։

Մեր նպատակն է պաշտպանել բանւոր դասակարգի բոլոր մարմնական և հոգեկան շահերը և

այդ ուղղութեամբ ազդել բանւորական օրէնսդրութեան վրայ։ Մենք ջանալու ենք ձեռք բերել այն տեսակ փոփոխութիւններ, որոնք նպաստեն աշխատաւոր դասակարգի մարմնաւոր և հոգեկան ոյժերի զարգացման և զօրանալուն, և դրանով աւելի ևս ընդունակ դառնան ընկերվարական յետագայ մեծ և արդիւնաւոր կռիւը մղելու։

Այս նկատումներով՝ մենք նախ ձգտում ենք կրճատել գործաւորական օրւայ ժամերի թիւը։ Առայժմ արդիւնաբերութեան շատ ճիւղերի մէջ մենք պահանջում ենք հաստատել ութ ժամւայ բանւորական օր։ Բայց կան արդիւնաբերութեան այնպիսի ճիւղեր, ուր աշխատանքը չափազանց վնասակար է և վտանգաւոր գործաւորի առողջութեան համար։ Այստեղ մենք պահանջում ենք, որ աշխատանքը ութ ժամից պակաս տևէ։ Ընդհանրապէս աշխատանքի տևողութիւնը պէտք է համապատասխանէ այն պահանջներին, որ մշակած է գիտական առողջապահութիւնը։

Պէտք է որոշել օրավարձի նւազագոյն մի չափ, մի մինիմում, որից պակաս գնով մարդ աշխատեցնելը պէտք է խստիւ արգիլի։ Այս չափը պէտք է որոշեն մի կողմից ինքնավար մարմինները, օրինակ քաղաքային ինքնավարութիւնը և միւս կողմից՝ բանւորների արհեստակցական միութիւնները։

Բանւորները իրենց աշխատանքի ընթացքում ենթակայ են ամէն տեսակ դժբախտ պատահարներին · մէկի ձեռքն է կտրւում, միւսը հանքի մէջ խեղդամահ է լինում, երրորդը հիւանդանում է՝ թողնելով ընտանիքը անել դրութեան մէջ և այլն։ Այս պատահարների հետևանքները

մեղմացնելու համար՝ մենք պահանջում ենք բանուորների ապահովագրութիւնը պետութեան և գործարանատէրերի հաշւին՝ իր բոլոր տեսակներով— ծերութեան, հիւանդութեան, անգործութեան և այլ դէպքերի համար։ Ապահովագրութեան գործը պէտք է վարեն իրենք գործաւորները ինքնավար հիմունքներով, այսինքն իրենց ընտրած մարդկանց միջոցով։

Օրէնքով պէտք է ապահովել աշխատանքը, տալով գործաւորներին աշխատանքի առողջ և նպաստաւոր պայմաններ։ Այս նպատակով պէտք է բարելաւումներ մտցնել առևտուրի և արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում, համաձայն գիտական առողջապահութեան պահանջներին։ Բանուորների կողմից պէտք է ընտրուեն յատուկ վերատեսուչներ, որոնք պէտք է հսկեն բոլոր գործարանների և աշխատանոցների վրայ և պէտք է բարելաւեն աշխատանքի առողջական պայմանները։

Սրանք պէտք է հսկեն, որ բանուորական աշխատանքը բնականոն (նորմալ) պայմանների մէջ կատարւի. որ գործարանների շէնքերը առողջապահիկ պայմաններով շինուած լինեն և ոչ թէ այսօրուան խեղդուկ մթնոլորտն ունենան։ Պէտք է վերացնեն պայմանաժամից աւել տևող աշխատանքները։

Պատանիներին մինչև 16 տարեկան հասակը պէտք է արգիլեն աշխատեցնել գործարաններում. այդ տարիները ուսման պիտի նուիրուած լինեն։ 16–20 տարեկան դեռահասները պէտք է չափահասներից պակաս աշխատեն։ Պէտք է խստիւ արգիլեն մանուկների աշխատանքը և հսկեն, որ յղութեան որոշ ժամանակ կանայք ազատ լինեն

աշխատանքից։ Գործաւորներն ամէն շաբաթ պէտք է բաւականաչափ հանգիստ ունենան։

Վերջապէս անհրաժեշտ է, որ բանուորները կազմեն արհեստակցական միութիւններ թէ՛ իրենց շահերը պաշտպանելու և թէ՛ համայնակեցութեան վարժուելու համար։ Այս միութիւնները գնալով միշտ աւելի մեծ մասնակցութիւն պէտք է ունենան աշխատանքի ներքին կազմակերպութեան մէջ. գործարանների և արհեստանոցների մէջ աշխատանքի կազմակերպութիւնը և բաժանումը պէտք է նրանց մասնակցութեամբ կատարւի։

Ընկերնե՛ր, մեր ծրագրի ամենաբնորոյն կողմը հողային հարցն է, հողային յարաբերութիւնների վերակազմութիւնը։ Շատերը չարամտութեամբ ասում են մեզ համար՝ իբր թէ մենք միայն հողային ծրագիր ունենք։ Դուք տեսաք որ դա մի զրպարտութիւն է. քաղաքական պահանջները և գործաւոր դասակարգի շահերի պաշտպանութիւնը մեր ծրագրում իր յատուկ տեղն է գրաւում։ Այդ տարաձայնութեան առիթ է տուել այն հանգամանքը, որ ո՛չ մէկ կուսակցութեան ծրագրի մէջ հողային հարցը այնպիսի մեծ տեղ չի գրաւում և այնքան կարևորութիւն չունի, որքան մեր ծրագրում։ Եւ զարմանալի չէ այդ հանգամանքը. մեր երկիրը գերազանցապէս հողագործական է և մեր ժողովուրդի ահագին մեծամասնութիւնը՝ երկրագործ։

Մեր երկրում հողային յարաբերութիւնները անբաւարար են և անարդար. մենք ունենք հողատէր աղնուականների մի մեծ դասակարգ, որին և պատկանում է հողի մեծագոյն մասը. հողի խոշոր հատուածներ պատկանում են նաև եկեղե-

ցիներին ու վանքերին, պետութեան ու արքայական ընտանիքին: Ժողովուրդը, որ առանց հողի ապրել չի կարող, ամէնից քիչ հող ունի իր ձեռքում: Ընկերվարութեան յաղթանակի համար բաւական չէ կռիւ մղել բուրժուական և մասնաւոր սեփականութեան կարգերի դէմ. պէտք է աշխատաւոր ժողովուրդի օգտին փոխել նախ տիրող հողային անարդար յարաբերութիւնները: Այս կռիւի մէջ՝ իբր ամուր յենարան՝ մենք ունենք ժողովրդի դարաւոր կենցաղը և նրա հայեացքները հողի մասին:

Մեր գիւղացին տնտեսական կեանքի մասին ունի մի որոշ և ուրոյն հայեացք, որ բնաւ նման չէ ուրիշ ժողովրդների աշխարհայեացքին: Ինչպէս իր կենցաղը, այնպէս էլ իր աշխատանքները համայնական են և աշխատաւորական: Մեզանում հողը պատկանում է ամբողջ գիւղին՝ համայնքին և ոչ թէ նրա այս կամ այն անդամին: Հողերը պարբերաբար բաժանւում են և մեռած անդամի հողը անցնում է նորածին գիւղացուն: Այսպիսով հողը գիւղում ամէնքին է ընդհանրապէս և ոչ ոքինը՝ մասնաւորապէս: Երբ գիւղացու ժառանգութիւնը պէտք է բաժանել, համագիւղացիք կարևորութիւն են տալիս ո՛չ թէ արենակցական կապին, այլ այն հանգամանքին թէ ժառանգորդը ո՛ր չափով է մասնակցել իր աշխատանքով բաժանւող հարստութիւնը կազմելուն: Այս կարգերը գրաւոր օրէնք չեն, գալիս են հնուց իբր աւանդութիւն, սովորոյթի ոյժով գոյութիւն ունեն:

Յատկապէս մեծ նշանակութիւն ունի մեր ժողովուրդի մէջ տարածւած մի խորին համոզում, որ չնայած աւաղակ կառավարութեան ջան-

քերին՝ արմատախիլ չէ եղած: Մեր գիւղացու խորին համոզմամբ հողը չի կարող որևէ մէկի սեփականութիւն լինել. նա ոչ ոքի չի պատկանում, կամ ինչպէս նա է ասում. «պատկանում է Աստծուն»: Նրա կարծիքով հողից կարելի է օգտուել, բայց երբե՛ք տիրել. իսկ օգտուելու իրաւունք նա՛ ունի միայն, ով աշխատում է այդ հողի վրայ: Որևէ մէկը, թէկուզ և հողի տէրը լինի նա, եթէ չի աշխատում այդ հողի վրայ, նրանից օգտուելու իրաւունք չունի:

Հիմնւելով մեր ժողովրդի կենցաղի և հայեացքների վրայ՝ մենք պահանջում ենք հողը համայնացնել (սոցիալիզացիա), այսինքն մենք պահանջում ենք հողը հանել ապրանքային շրջանառութիւնից, չթողնել որ ապրանքի նման առ և ծախի առարկայ լինի: Նա չպէտք է պատկանի մասնաւոր անձերին կամ խմբերին, չպէտք է լինի նրանց սեփականութիւնը. նա պէտք է դառնայ համաժողովրդական ստացւածք հետևեալ հիմունքներով.—

Մեր քաղաքական ծրագրից դուք արդէն տեսաք, որ ապագայ Ռուսաստանը մենք երևակայում ենք իբրև ինքնավարութիւնների մի ցանց, որոնք կապւած են իրար հետ դաշնակցական կապերով: Բոլոր հողերը պէտք է ենթարկւին այս ինքնավար մարմինների իրաւասութեան, լինեն այդ մարմինները կենդրոնական՝ ինչպէս համայն Ռուսաստանի պատգամաւորական ժողովը թէ տեղական, ինչպէս որևէ գիւղի համայնական խորհուրդը: Այս մարմինները պէտք է լինեն անդամակարգ, այսինքն պետութեան ամէն քաղաքացի կարող է ընտրել և ընտրւել այդ ինքնավարութեան մէջ. ընտրութիւնները պէտք է

կատարուեն ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի քուէարկութեամբ։

Այսպիսով ամէն քաղաք իր հողային գործերը կը կարգաւորէ իր ընտրած խորհուրդի միջոցով, ամէն գիւղ՝ իր համայնական խորհուրդով, գաւառի հողային գործերը կը վարեն գաւառական խորհուրդը, պետական հողերի գործը կը մնայ պատգամաւորական ժողովին և այլն։

Սրանք պէտք է նայեն գաղթումի գործերին, պէտք է հսկեն ազգաբնակութեան հաւասար սփռումի վրայ, պէտք վարեն հողավարչութեան գործերը, հոգան հողային պահեստի (ֆոնդ) մասին և այլն։

Հողից օգտուելու գործը պէտք կազմակերպել աշխատաւորական-հաւասարող հիմունքներով. այսինքն՝ պէտք է ապահովել գիւղացիների սպառողական նորմը սեփական աշխատանքի հիմունքով, լինի այդ աշխատանքը անհատական թէ ընկերովի՝ միևնոյնն է։ Ես խսկոյն կը պարզեմ այս մթին խօսքերի իմաստը։

Դուք տեսաք որ մենք չենք ընդունում հողի մասնաւոր սեփականութիւնը. հողը պատկանում է ամէնքին և ոչ ոքի առանձնապէս։ Հողից կարելի է միայն օգտուել, տիրել ոչ ոք չի կարող։ Բանի որ հողի տէրն ամէնքն են, ուրեմն ամէնքն էլ իրաւունք ունեն հողից օգտուելու։ Բայց ի՞նչ չափով, ահա՛ խնդիրը։

Նախ պէտք է նկատել, որ մենք դէմ ենք ուրիշի աշխատանքը չահագործելուն, որ նշանակում է բանուորներ կամ գործաւորներ աշխատեցնելուն և նրանց աշխատանքով ապրելուն։ Ամէն մարդ պէտք է իր սեփական աշխատանքով ապրի։ Մի քանի գիւղացիներ կամ նոյնիսկ մի

ամբողջ համայնք կարող են իրենց բաժին ընկած հողերը միացնել, միասին վարել ու ցանել և արդիւնքը իրար մէջ բաժանել. բայց այստեղ ամէնքը հաւասար են, չկայ տէր ու բանուոր։ Նրանք միացած են աշխատանքը խնայելու և իրենց գործը աւելի լաւ վարելու համար միայն։

Արդ, մենակ լինեն գիւղացիները թէ խմբովին, նրանցից ամէն մէկը իրաւունք պէտք է ունենայ այնչափով հողաբաժին ստանալու, որ կարողանայ իր սեփական աշխատանքով իր բոլոր անհրաժեշտ կարիքները հոգալ։ Ահա այս չափն է, որ կոչւում է սպառողական նորմ։

Բայց մարդիկ աճում են, լինում են մեռնողներ և նոր ծնուողներ. ի՞նչ պէտք է լինի այս նոր ծնուողների վիճակը։ Մեռնող գիւղացիների հողերը պէտք է տրւին նոր ծնուածներին. իսկ եթէ գիւղի ազգաբնակութիւնը այնքան չատանայ, որ համայնքի հողը բաւական չլինի ամէնքի սպառողական նորմը գոհացնելու, այն ժամանակ կարիք ունեցողներին նոր հողեր կը տրւին հողային պահեստից։ Այս է, որ կոչւում է հաւասարացում։

Այսպէս ուրեմն, երբ մենք ասում ենք թէ՝ հողից պէտք է օգտուել աշխատաւորական-հաւասարող հիմունքներով և որ պէտք է ապահովել սպառողական նորմը սեփական աշխատանքի հիմունքով՝ այդ աշխատանքը ընկերովի լինի թէ անհատական — նշանակում է, ամէն մարդ կարող է հողից օգտուել միայն այն պայմանով, որ ինքն աշխատի նրա վրայ. նա կարող է ա՛յնքան հող ստանալ, որ կարողանայ իր սեփական աշխատանքով կամ իր ընտանիքի և նմանների հետ ընկեր-

բանալով՝ ապահովել իր բոլոր կարիքները։

Բայց կան հողեր, որոնք աւելի հասոյթ են տալիս, քան նոյն քանակութեամբ հողի մի ուրիշ կտոր, կամ աւելի արգաւանդ են, կամ մօտ են քաղաքին, երկաթուղիին և այլն։ Այս դէպքում առաջ է գալիս եկամուտի մի յատուկ տեսակ, որ կոչւում է հաս (ռենտ)։ Այս աւելորդ հողահասը պէտք է առնուի հարկի կամ տուրքի ձևով և գործադրուի հանրութեան օգտին։

Կան այն տեսակ բնական հարստութիւններ, որոնք միայն տեղական նշանակութիւն չունին, այլ շահագրգռում են հանրութիւնը։ Այսպէս են օրինակ ընդարձակ անտառները, որոնք եթէ անխնամ ձգուին և կտրատուին՝ կարող են փոխել երկրի կլիման և ցամաքեցնել մեծ գետերի աղբիւրները։ Թէ ինչպէս պէտք է վարուել այս կարգի հարստութեանց հետ՝ այդ հարցը կը լուծեն համապատասխան ինքնավար մարմինները։ Եթէ մի հարստութիւն համապետական նշանակութիւն ունի, նրա կարգադրութիւնը կը մնայ համառուսական պատգամաւորական ժողովին. եթէ նա կարևոր է մի շրջանի համար՝ այդ շրջանի ինքնավարութիւնը կը լինի կարգադրողը. եթէ վերաբերում է մի որոշ գաւառին՝ այդ գաւառի ինքնավար խորհուրդը և այլն։

Բայց կան և այն տեսակ հարստութիւններ, որոնք գտնւում են գետնի տակ. այսպէս են բոլոր հանքերը։ Ո՞ւմը պէտք է համարուեն նրանք։ Նրանք կը պատկանեն պետութեան և կը գտնուին նրա իրաւասութեան տակ։

Վերջապէս կայ մի ուրիշ կարևոր հարց։ Այսօր հողերի մեծ մասը պատկանում է վանքերին, աղնուականներին և արքայական տանը։ Երբ մենք

ասում ենք, որ պէտք է ամբողջ հողը համայնացնել, այդ նշանակում է, որ պէտք է հողն առնել նրա այսօրուայ տէրերից և տալ ժողովրդին։ Բայց ի՞նչպէս առնել. դրամո՞վ։ Այսինքն՝ այդ հողերի համար նրանց այսօրուայ տէրերին պէտք է վճարե՞լ նրանց արժէքը։ Ո՛չ։ Մեր կարծիքով՝ յեղափոխութեան ժամանակ այդ բոլոր հողերը պէտք է գրաւել առանց վարձատրութեան։

Բայց կայ մի հանգամանք։ Այդ հողերի այսօրուայ տէրերը սովորած են ուրիշի աշխատանքով ապրելու։ Երբ գրաւեն նրանց հողերը, որ նրանց եկամուտի միակ աղբիւրն է, հողատէրերի վիճակը չափազանց կը ծանրանայ։ Մեր ծրագրով հողից կարող է օգտուել նա՛, ով աշխատում է այդ հողի վրայ. այսօրուայ հողատէրերը հազիւ թէ կարողանան անմիջապէս հողագործութեան անցնել։ Ի՞նչ պէտք է անել։ Մեր ծրագրի տրամադրութեամբ հասարակութիւնը պարտաւոր է առժամապէս նեցուկ հանդիսանալ այդ կարգի անձերին, մինչև որ նրանք կարողանան յարմարուիլ իրենց անհատական գոյութեան նոր պայմաններին։ Չպէտք է մոռանալ, որ յեղափոխութիւնը կռիւ է՝ իրաւունքի անունով, նա ձգտում է արդարութեան և ոչ թէ վրիժառութեան...։

Վերը յիշած տնտեսութիւններից դուրս՝ կան նաև գիւղական, քաղաքային և գաւառական տնտեսութիւններ, որոնց նպատակն է գոհացնել աշխարհակութեան բազմատեսակ կարիքները։ Այսպէս է օրինակ ձրի բժշկութիւնը թէ տանը և թէ հիւանդանոցներում. գիւղատնտեսական գործիքների, սերմացուների, հացի և այլ մթերքների մատակարարութեան գործը։ Այս և նման

գործերը պէտք է կազմակերպեն գաւառական և շրջանային ինքնավար մարմինները թէ՛ իրենց սեփական միջոցներով և թէ համապետական հասոյթների օժանդակութեամբ։

Պէտք է ամէն կերպ նպաստել աշխատաւորական տնտեսութիւնների զարգացման. այս ընկերութիւնները պէտք է կազմակերպուին առաւելապէս աշխատակցական հիմունքներով և սրբանց նեցուկ լինելու համար պէտք է պետական լայն վարկ բանալ։ Պէտք է նպաստել ջուրի, լոյսի, ճանապարհների և ուրիշ հանրօգուտ տնտեսութիւնների համայնացման։

Մեր կարծիքով՝ թէ՛ քաղաքային և թէ գիւղական համայնքները պէտք է լայն իրաւունք ունենան հարկեր դնելու անշարժ կայքերի վրայ և նոյնիսկ ստիպողաբար արտագրաւելու, եթէ այդ անհրաժեշտ է ընդհանուրի բարօրութեան, բայց մանաւանդ բանւոր դասակարգի բնակարանային պէտքը գոհացնելու համար։

Մենք պէտք է ամէն կերպ աջակցենք համայնական, գաւառական և համապետական այն քաղաքականութեան, որի նպատակն է գործակցական միութիւնների զարգացման նպաստել, պայմանով որ այդ միութիւնները ռամկավարաշխատաւորական հիմքերի վրայ լինեն։

Մարդկային ամբողջ տնտեսութեան համայնացումը կը կատարուի միայն ընկերվարական կարգերի լիակատար տիրապետութեան ժամանակ, որ հեռաւոր ապագայի գործ է։ Բայց այսօր՝ բուրժուական կարգերի տիրապետութեան ժամանակ՝ հնարաւոր է թէ՛ մասնաւոր և թէ հասարակական տնտեսութեան այս կամ այն ճիւղը աւելի կամ պակաս չափով համայնացնել։

Մենք դէմ չենք այս կարգի համայնացումներին, բայց մի պայմանով. պէտք է այնպէս անել, որ դրանով բանւոր դասակարգը աւելի ևս մեծ կախում չունենայ պետութեան վարիչ պաշտօնէութիւնից։

Երբ քաղաքական կազմը ռամկավարական չէ, երբ ոյժերի փոխադարձ յարաբերութիւնը շատ անբնական է, այսինքն՝ երբ աշխատաւոր դասակարգի կազմակերպուած ոյժը շատ չնչին նշանակութիւն ունի պետական-հասարակական կեանքում, այն ժամանակ այդ տեսակ համայնացումները ո՛չ թէ օգուտ, այլ միայն վնաս կարող են բերել աշխատաւոր դասակարգին։

Այսպէս է, օրինակ, տնտեսութեան համայնացման այն ձևը, որ կոչւում է «Պետական Ընկերվարութիւն», երբ երկաթուղիները և տնտեսութեան շատ ուրիշ ճիւղեր պատկանում էն պետութեան։ Մենք զգուշացնում ենք այս տեսակ «ընկերվարութիւնից»։ Սրանով պետութիւնը հանդիսանում է մի տեսակ դրամատէր, արդիւնաբերութեան և առևտուրի որոշ ճիւղեր կենդրոնանում են տիրող պաշտօնէութեան ձեռքում և նա այդ ամէնը ծառայեցնում է իր հարկահանութեան և քաղաքական նպատակներին։ Պետական ընկերվարութիւնը թմրեցնում է բանւոր դասակարգի գիտակցութիւնը և հեռացնում է աշխատաւորութեան արդար դատի վերջնական յաղթանակը։

Մղելով մեր անդուլ կռիւը ինքնակալութեան դէմ՝ մենք պահանջում ենք Հիմնարկու Ժողով. այսինքն՝ ժողովուրդի ընտրած պատգամաւորների մի ժողով, որոնք պիտի քւէարկին ընդհանուր, հաւասար, դաղտնի և ուղղակի ձայնատը-

ութեամբ և որոնց պաշտօնը պէտք է լինի պետական նոր կեանքի հիմունքները դնել և իշխանութիւնների սահմանները գծել, հաշիւը մաքրելով ինքնակալութեան հետ և վերակազմելով այսօրուան բոլոր անարդար կարգերը։

Այս վերակազմութեան ոգին պէտք է լինի հաստատել ազատ ժողովրդական կառավարութիւն, մտցնել անձնական անհրաժեշտ ազատութիւններ և պաշտպանել աշխատանքի բովանդակ շահերը։

Վերակազմութեան այս ծրագրով գործում ենք ներկայումս, միևնոյն ծրագիրը պաշտպանելու ենք թէ՛ Հիմնարկու ժողովում և թէ յեղափոխութեան ժամանակ անմիջապէս մտցնելու ենք կեանքի մէջ։

Ընկերնե՛ր, ես վերջացրի։ Դուք տեսաք, որ մեր ամբողջ ծրագիրը, մեր բոլոր պահանջները մի բարձր և վեհ նպատակ ունին. պաշտպանել ժողովրդի ընդհանրութեան՝ աշխատաւոր մարդկութեան՝ կամ որ նոյն է՝ գործաւոր դասակարգի և աշխատաւոր գիւղացու բոլոր կենսական շահերը և բռնաբարած իրաւունքները։

Խորապէս համոզած՝ որ այն շարժումը որին ծանուցում ենք, ամենից արդարն է, որ երբ և ինչ եղած է պատմութեան մէջ և ջերմապէս յուսալով, որ մի օր համայն մարդկութիւնը պէտք է կազմէ մի ահագին ընկերվարական համերաշխ ընտանիք, մենք առանց շեղումի և յամառութեամբ շարունակում ենք մեր դժուարին, բայց սրբազան կռիւը, հրաւիրելով միանալ մեզ հետ այն բոլոր մարդկանց, որոնք ազնիւ սիրտ և լաւագոյն խիղճ ունին։

—o (ՎԵՐՋ) o—

Գրադարան

«ՀԱՅՐԵՆԻՔ» Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— **ԱՆԳԻՕՆԻԿԷ**, *Վէպ Յոյն յեղափոխական կեանքէ, Ս. Քսէնոսի, թարգմ. Ի. Ա. Երան.— Գին* $1.00 *արտասահման* 5 *ֆրանք։*

2.— **ԱՐՇԱԼՈՅՍ**, *տրամա Թիւրքահայ կեանքէն Վարդգէսի.— Գին* 10 *սէնթ, արտասահման* 50 *սանթիմ։*

3.— **ՄՕՍՈՒՆ ԵՒ ԶՕՒԻ ԱՐՇԱՒԱՆԴՆԵՐԸ**, *Օննիկի.— Գին* 10 *սէնթ, արտասահման* 50 *սանթիմ։*

4.— **ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՎԻՊԱԿՆԵՐ**, *Միրզա-զօրի.— Գին* 5 *սէնթ, արտասահման* 25 *սանթիմ։*

5.— **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՒԱՂԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**, *Յ. Զագմագճեանի, (մամուլի տակ)։*

6.— **ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԳԱՐԱՆ**, *գին* 2.50 *տալեր, Տաճկաստանի համար զեղջուած* 37.50 *գրուշ։*

7.— **ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ**, *թարգմ. Ն. Հանդայց.— Գին* 10 *սէնթ, Տաճկաստանի համար զեղջուած՝* 2 *գրուշ։*

Ստանալու համար դիմել՝

HAIRENIK PRESS
9 Knapp St. BOSTON, Mass. (U. S. A.)

ՀՀ Ազգային գրադարան
NL0199502

20. 565